ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղանակ

9–10

(228-229) Սեպտեմբեր-հոկտեմբեր, 2025

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ | 5

Երբ ավելի քան 100 տարվա հեռավորությունից նայում ենք Ավ. Իսահակյանի գրական, հասարակական, քաղաքական գործունեությանը, տեսնում ենք Վարպետի ամբողջ վիթխարիությունը: Նրա ողջ գործունեությունը միտված է մեր այսօրվա խնդիրներին.

-Պահպանել ավանդականը, պահպանել ազգայինը, պահպանել հայկականը:

-Անողոք լինել դրսի ու ներսի թշնամիների հանդեպ, որոնք ձեռք են բարձրացնում մեր ազգայինի, հայկականի վրա: Իսկ որտե՞ղ ենք հայտնվել մենք հիմա… Ինչպե՞ս ենք կարողանում հանդուրժել, երբ չնչինները քար են նետում անգամ Արարատին…

Բայց «Արարատի ծեր կատարին / Դար է եկել, վայրկյանի պես, / Ու անցել»… սա էլ կանցնի:

Որքան էլ մեծ է Վարպետը, հասարակ է նաև և բոլորին հնարավորություն է տալիս երկխոսելու իր հետ. լինի փիլիսոփա թե՛ մաճկալ, մտավորական թե՛ յայլավոր: Ես էլ առիթից օգտվելով փորձեմ երկխոսել մեծն հոբելյարի հետ:

-Ողջո՛ւյն, սիրելի՛ Վարպետ, շնորհավորում եմ համահայկական տոն դարձած քո ծննդյան 150-ամյակը:

Շնորհավորում եմ նաև օտար ամայի ճամփեքի վրա դեգերող քո բազմահազար արտագաղթա՛ծ զավակների անունից:

Համբերանքի չիբուխը ծխող քո վիատվա՛ծ զավակների անունից:

Ազատության զանգը կարծես կորցրած, բայց իրենց հոգու խորքում հավերժորեն պահո՛ղ քո զավակների անունից:

Ողջ հայկական սփյուռքի՛ անունից, սփյուռք, որը գոյացավ, երբ մեր ժողովուրդը սխալվեց և կեղծ բարեկամությունը նախընտրեց իրական պայքարից:

Ի վերջո, բոլոր մահկանացուներիս ողջո՛ւյնն ընդունիր, անմա՛հ Վարպետ:

Ավ. Իսահակյանը, բացի հայ գրականության հենասյուն լինելուց, բացի հզոր հասարակական-քաղաքական գործիչ լինելուց, նաև մեր ազգի խորհրդանիշներից մեկն է: Նրա քաղաքական վաստակը նույնանում է Հայաստանի զինանշանին, հասարակական գործունեության հոգևոր դրոշը ծածանվում է ոչ միայն մեր փոքրիկ հողակտորի, այլև ի սփյուռս աշխարհի վրա, իսկ նրա գրական ժառանգությունը հայ ազգի օրհներգն է. վկա մեծ բանաստեղծի ստեղծագործությունները, որոնք մեր ժողովրդի շուրթերին են հար ու լինելու են հավետ: Ուրեմն Վարպետը համահավաք Հայաստանն է և նրա անձնավորված խորհրդանիշը:

Իսկ եթե գանք գրականություն, եթե գանք նրա խոհափիլիսոփայական շերտերը…

«Ոգու սովի» կանխագուշակումից մինչև «աստիճանները վերևից լվալու» պատգամը, և այս երկուսի միջակայքում, և այս երկուսից առաջ և հետո էլ Իսահակյանը արդիական է, Իսահակյանը մեզ հետ է և մեր կողքին: Իսահակյանի ստեղծագործությունները, Իսահակյանի գործն ընդհանրապես մեր մեջ է, իսկ ավելի ճիշտ՝ մեր հոգու շուրթերին: Մնում է մեր դեռևս ունեցած հոգին չկորցնենք, մեր արդեն կորցրած հոգին վերադարձնենք, և ամեն ինչ իր տեղը կընկնի. մենք դարձյալ կլինենք ոգեղեն, Իսահակյանը և մեր մյուս մեծերը կլինեն մեզ հետ և ապրվող կյանքը կլինի իմաստալից և ավելի մարդկային…

Ուրեմն երիցս փառք այն հողին, այն ջրին, որ Իսահակյան են ծնել:

Փա՛ռք քեզ, ամեն ինչ տեսած Գյումրի քաղաք:

Փա՛ռք քեզ, բազմաչարչար Հայաստան աշխարհ:

Փա՛ռք քեզ, «Իմ տառապած ու փառապանծ», իմ երիցս խաբված, բայց լավագույնին արժանի, հա՛յ ժողովուրդ:

Անդրանիկ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍԸ

Պատմում են, որ 1875թ. հոկտեմբերի 30-ին, երբ աշխարհ եկավ Ավետիք Իսահակյանը, տատմերը բացականացել է՝ ավետիս՝ բարի լուր... Հարեւան սենյակում շնչասպառ այդ լուրին սպասող հայրը՝ Սահակը, վճռում է Ավետիք անունով կնքել իր որդուն:

Իսկապես, նա մեծ ու բարի լուր եղավ իր ժողովրդի ու հայ գրականության համար: Դեռ պատանի՝ պատանի չեղավ. իր ոգու անդունդին կռացած՝ աշխարհին զուլում ասող եղավ:

Մեր զառ-վառ երազների բանաստեղծը, սիրուց էրված բլբուլը, մեր դարդլու և մուրազլու սրտի մխիթարը, մեր Ալագյազի պես դուման կապածը, մեր սրտով սիրած Վարպետը, որ պահում է մեզ Բանաստեղծության յոթ ճյուղ վերեւում... էս մեծ սիրահարն ու սիրուց երբեք չբեզարածը «երգեր ու վերքեր» հյուսեց, հույզերի տարերային թափով մրրկեց իր երկրային սերերն ու երկնային հափշտակությունները, հասավ մի սահմանի, որից անդին անսահմանն էր...

«Ես երգիչ եմ, երկնի թիթեռ» հավատամքը խորացավ մեծ ժամանակի մեջ և շարունակեց հարստանալ կենսական նոր թրթիռներով ու տիեզերական լիցքերով:

Իր ծննդյան 65-ամյա հոբելյանին Ավետիք Իսահակյանի խոսքը հնչեց իբրեւ սրտառուչ ներբող հայրենի եզերքին. «Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել, որովհետեւ այստեղ է, որ սկսել է բաբախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնում է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել ու սովորել մեր հոյակապ մայրենի լեզուն...

...Նվիրական Շիրակում եմ հյուսել իմ շքեղ երազները, նրա զմրուխտե Մանթաշում, Ալագյազի ադամանդե կատարի վրա, բյուրեղ աղբյուրների զրնգոցի մեջ, Արփաչայի ափերում, բոստաններում, ջաղացներում և Անիի ներշնչող պարիսպների ու առյուծաբաշ բուրգերի տակ: Ես չափազանց երախտապարտ եմ իմ հավերժ սիրելի Շիրակին, որովհետեւ նա ինձ կազմավորել, ոգեւորել և դարձրել է հայ հինավուրց ժողովրդի անմահ ու վեհ գրականության անուններից մեկը, կրտսերագույնը: Այստեղ եմ ճաշակել հայ գրականությունը, որից ստացել եմ սրբազան պատգամներ...»:

Ընդսմին, Իսահակյանի բանաստեղծության առանցքը մարդու անսպառ հոգին է, հոգու վերսլացումը: Կենդանի հույզի, զգացմունքի ու կարոտի հրթիռներ է արձակում դեպի մեծ եզերք: Սրտի միջուկային երգեր են դրանք, և բառերն էլ նրան պետք էին հրեղեն խոսքի, Վեհ խոսքի համար...

Նա երգում է աստղի ու սրտի փառքի համար, տիեզերքի պերճ հյուսվածքի՝ մեզ համար: Նրա երգը սրտակենտրոն է, նույնն է թե՝ տիեզերակենտրոն, ամեն ինչ պտտվում է սրտի շուրջը, սրտի մասին է, սրտի հետ է, սրտում է. «Սիրտս երկինք է, ամեն արարած աստղ ունի այնտեղ, գահ ունի այնտեղ»... «Սրտումս արեւ էլ չի ծագի, սիրտս էլ դուման, Ալագյա՜զ», «Ա՜խ, մերիկ ջան, մեկ նայե տես, սիրտս խորունկ վերք ունի», «Սրտիս սավդեն-խորունկ յարեն անդեղ թողեց ու գնաց...»:

Մարդու տիեզերացում և տիեզերքի մարդացում. սա է Իսահակյանի երգի ուղին, և ժողովուրդն էլ երգում է նրա երգերը, ինչպես իր երգերը կերգեր՝ ինքնամոռաց, թրթռուն...

Մոլեգին Չարենցը այսպես պիտի գնահատեր մեծին.

Արդեն ցնորք է անհնար,
Ունենալ երգ՝ այնքան նաիվ,
Որ հմայե երեխային
Եվ ծերունու սրտում մնա:

Սրանով հանդերձ՝ Իսահակյանի բանաստեղծական գյուտն ու նվաճումը ոչ թե ժողովրդական երգին հավասարվելն է, այլ այդ երգի գլխին «ադամանդե թագ» դնելը, ժողովրդական տարերքը գեղարվեստական ընդհանրացմամբ հայ ժողովրդին վերադարձնելը: Մարդու կերպարի բացահայտման մեջ նա հասնում է բացառիկ նվաճման. հայտնաբերում է նրա տառապելու և երազելու ձևը՝ բնական տարերքից գնալով դեպի հոգու խորքը:

Աշխարհի միտքը իր մեջ կրող իմաստասեր բանաստեղծի գեղարվեստական տիրույթում հայ և օտար մշակույթների խաչաձևումից ծնվեց մի կատարելություն, որը պիտի ընդլայներ հայոց բանաստեղծության խոսքի ծիրը՝ լեզվի լեզուն...

Պատահական չէ, որ էպիկական մեծ ժամանակի մեջ մեծ տարերքի բանաստեղծին ընդունված է համարել հայ պոեզիայի Փոքր Միհր, ըմբոստ ու երազող, նաև վրիժառու ոգի, որ պատերազմ է հայտարարում չար ուժերի դեմ՝ ընդվզելով աններդաշնակ աշխարհի, սոցիալական անարդարության ու տիեզերական նիրհի դեմ...

Ռոզա
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակի՝ հոբելյանական տարվա շրջանակներում ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը վերջերս հյուրընկալել էր Գյումրու «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության մի խումբ աշխատակիցների ու սաների:

«Վարպետը վարպետների քաղաքում» խորագիրը իրենց՝ կենտրոնի ծրագրի անվանումն էր:

Օրվա բանախոսը բան. գիտ. թեկն. Կարինե Մարտիրոսյանն էր: Ապա՝ հանդիպման երկրորդ մասում, զեկույցին հետևեցին ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանի և արցախցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանի ելույթները:

Բանախոսը անդրադարձավ Վարպետի «ֆիզիկական» և հոգևոր ներկայությանը վարպետների քաղաք Գյումրիում՝ սկսած գրողի ծննդավայր-օջախից՝ տուն-թանգարանից մինչև նրա հուշարձանը Թատերական հրապարակում, ապա՝ դպրոցի, փողոցի առկայությանը՝ գրողի անվամբ: Վարպետի ստեղծագործական գործունեությանը անդրադարձը լայն կտավով էր՝ առանց ժանրային տարանջատումների: Մարդը, հերոսը, հույսի, հավատի ու ապրելու խորհրդանիշ հերոսը՝ Փոքր Միհերի վերադարձով:

Անդրանիկ Կարապետյանը կարևորեց հատկապես մեր ժամանակների համար Վարպետի արարումների ոգին և ուժը՝ խոսքն ամփոփելով իր բանաստեղծությամբ՝ նվիրված Ավ. Իսահակյանին: Ռոբերտ Եսայանը պատմեց ուշագրավ դրվագներ՝ ժամանակին Ավ. Իսահակյանի՝ Արցախ այցելության հետ կապված, նա ևս խոսքն ավարտեց Վարպետին ձոնված իր բանաստեղծությամբ:

ՀԳՄ Շիրակի մասնաճյուղի գողտրիկ ու հյուրընկալ հարկի ներքո հանդիպման մասնակիցները ևս իսահակյանական տողեր հնչեցրին՝ ոգեշնչված տիրող՝ բանաստեղծական ջերմ, անկաշկանդ մթնոլորտով:

Ավարտին ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի նախագահ Անդրանիկ Կարապետյանը «Ընտանիք» կենտրոնի գրադարանին նվիրեց Կարապետ Հովսեփյանի «Ծաղիկներ ժամանակի ձյան վրա» ժողովածուն, իսկ ներկաներին՝ կրկին նույն հեղինակի «Մարդն արարիչ» պոեմը՝ որպես վկայություն իսահակյանական օրը ամփոփող ոգեղենության:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ավետիք Իսահակյանին վիճակված էր ապրել հարուստ, բովանդակալից և ազգանվեր կյանք՝ լի բազում ստեղծագործական նվաճումներով, նաև՝ դժվարություններով ու դառնություններով: Նրա երգած սերը վարակիչ էր, ապրած կյանքն ու անցած ճանապարհը՝ ուսուցանող, թախիծը՝ լուսավոր, տխրությունը՝ ցավեցնող:

Ավ. Իսահակյանը բազմաժանր գրող է և մեծարժեք ժառանգություն է թողել այսօրվա և գալիք սերունդների համար՝ հավատարիմ մնալով իր պատգամին.«,Մարդ չպիտի մտածե աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին»:

Նրա երկերը թարգմանվել են տարբեր լեզուներով և արժանի տեղ ունեն համաշխարհային գրականության գանձարանում: Նրա ստեղծագործությունները հրատարակվել են տարբեր վայրերում՝ Պոլսում, Վենետիկում, Վիեննայում, Թիֆլիսում և այլուր: Հրատարակված գրքերը, նրա գրական ժառանգությունը պահպանվում են նաև գրադարաններում:

Գյումրու համայնքային կենտրոնական գրադարանում իրենց ուրույն տեղն ունեն Ավ. Իսահակյանի ստեղծագործությունները, նաև՝ հուշագրություններ, գրականագիտական հոդվածների ժողովածուներ, նրա մասին մենագրություններ, հուշագրություններ:

Գրադարանում առկա է 1950 թվականին Հայաստանի պետական հրատարակչությունում հրատարակված երկերի ժողովածուն՝ երկու հատորով, Երկերի լիակատար ժողովածուն՝ 14 հատորով, ծանոթ և անծանոթ էջեր, արձակ բանաստեղծություններ և պոեմներ՝ տարբեր տարիքի ընթերցողների համար:

2024 թվականին Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի նախաձեռնությամբ հրատարակվեց «Ավո, կնուտը գցեմ» գիրքը, որը նվիրված է գրողի ծննդյան 150-ամյակին: Գրքում ներառված են 42 հեղինակի՝ տարբեր ժամանակներում մամուլում և գրքերում հրատարակված կատակով լի հուշեր ու մանրապատումներ, որոնք յուրովի են բացահայտում Ավ. Իսահակյանի մարդկային հատկանիշները՝ անկեղծությունն ու նուրբ հումորը: Գրքում զետեղված հուշերում երևում է ժողովրդի մեծ սերը սիրելի բանաստեղծի նկատմամբ:

Կենտրոնական գրադարանում գիրքը կա և սիրով տրամադրվում է ընթերցողին: Մենք՝ գրադարանավարներս, մեծ պատասխանատվությամբ ենք կատարում մեր գործը՝ սերնդեսերունդ փոխանցելով այն հարուստ գրական ժառանգությունը, որ պահվում է գրադարանում:

Աննա ՍԵՐՈԲՅԱՆ

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Գյումրիում Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում իրականացվել է «Երկեր և երգեր» նախագիծը:

Միջոցառումների շրջանակում Գյումրու Ավ. Իսահակյանի հուշատուն-թանգարանում ամփոփվել է վարպետի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական միջազգային գիտաժողովը՝ ներկայացվել են գիտական զեկույցներ, որտեղ Շիրակի մարզային գրադարանից զեկույցով հանդես է եկել տնօրենի տեղակալ Նազմինե Բաղդասարյանը:

Վերջինս ներկայացրել է Իսահակյան-գրադարան կապի մասին տեղեկություններ, տեղեկացնելով, թե ինչպես է 1940թ. ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ քաղաքային գրադարանը անվանակոչվել բանաստեղծի անունով, այնուհետ 1978թ. Լենինականի քաղխորհրդի գործկոմի ենթակայությամբ գործող գրադարանները միավորվել են, կազմավորվել է Գրադարանային կենտրոնացված համակարգը, Իսահակյան բանաստեղծի անվանակիր գրադարանը դարձել համակարգի կենտրոնական գրադարան՝ ղեկավարելով քաղաքի բոլոր հանրային ու մանկական գրադարանների գործունեությունը:

1996թ. Հանրապետությունում մարզերի կազմավորումից հետո, Գրադարանների կենտրոնացված համակարգը մասնատվել է, համակարգի կենտրոնական գրադարանի հիման վրա ձևավորվել է «Շիրակի մարզի հանրապետական գրադարան»-ը՝ իր պաշտոնական անվանման մեջ չկրելով Իսահակյանի անունը, անցել Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության տակ, իսկ գրադարանային համակարգի աստիճանաբար վերականգնվող նախկին 24 մասնաճյուղերը՝ քաղաքային իշխանության ենթակայության:

«Գրադարանը պահպանում է տարիների իր ավանդույթը» պատշաճորեն արձագանքելու մեծ բանաստեղծի՝ թե ծննդյան տարեդարձին, թե մահվան տարելիցներին, 1975 թվականից, Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի առիթով սկիզբ առած պոեզիայի Իսահակյանական օրվան: Շիրակի մարզային գրադարանի հավաքածուն հարուստ է Իսահակյանի ստեղծագործությունների ու դրանց մասին գրականագիտական հրատարակություններով… Մեր և գալիք սերունդների խնդիրն է՝ գնահատել ու պահպանել այդ հոգևոր հարստությունը», - ամփոփել է իր զեկույցը Ն. Բաղդասարյանը:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԾԻԴՀԱՐԸ

Թափառական Շիդհարը վեր բարձրացրեց մտազբաղ աչքերը, որոնց վրա արևակեզ ճակատի խորշոմներն էին իջել:

Եվ տեսավ զարմանքով, որ ա՛յն վաղեմի ծանոթ ծովը, որի շառաչուն ափերով ինքն անցել էր մի քանի անգամ իր դարավոր թափառումների անկայան ընթացքում, հիմա մի ծարավուտ և տատասկոտ անապատ է դարձել:

Եվ տեսավ, որ նախկին ծովի կանաչ ալիքների փոխարեն, որոնց վրա նավերն էին օրորվում փետուրի պես, հիմա ավազի դեղին ալիքներն են գալարվում անապատային առյուծի բաշերի պես:

Եվ նավերի փոխարեն դանդաղ քայլում է քարավանը խուլ ղողանջումով:

Երկաթեղեն ոտներով մոտեցավ նա քարավանի պետին և խլաձայն հարցրեց.

- Քանի՞ ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել:

- Խե՜ղճ ծերուկ, խելքդ թռցրել ես,- բարձրաձայն ծիծաղեց առաջնորդը:

- Ճիշտ եմ ասում, անծանոթ բարեկամս, տարիներ առաջ երբ անցա, այստեղ մի անեզր ծով կար, իսկ հիմա՝ անջուր անապատ է:

Եվ նրա ահազդեցիկ ձայնը գալիս էր դարերի մռայլ խորքերից:

- Սակայն քո աչքերից չի երևում, թե դու խելագար ես: Բայց ի՜նչ անհասկանալի բաներ ես ասում: Մեր պապերի պապերի պապերը անցել են այս տեղով, ու նրանցից էլ շա՜տ առաջ շատերն են անցել, իսկ այս անապատն աշխարհի սկզբից կար ու կմնա… Երազի մեջ ես, ծերուկ, երազի մեջ:

Մի դաժան ծաղր կծկվեց Շիդհարի սևաթույր շրթների անկյունում: Եվ նորից քայլեց առաջ:

Անցան դարեր, նորից դարեր:

Թափառական Շիդհարի հարյուր անգամ երկիրը չափող ոտները մի անգամ վերստին ուղղվեցին դեպի անապատը:

Երբ մոտեցավ ծանոթ վայրի սահմաններին, տեսավ, որ երեկվա ամայի անապատում հիմա մի մարդաշատ քաղաք է եռում:

Մոտեցավ քաղաքի մեծ դռանը և միամտորեն հարցրեց դռնապանին.

- Ի՜նչ շուտ շինեցիք այս քաղաքը:

Դռնապանը շատ տարօրինակ գտավ այս հարցը:

- Ինչպե՜ս թե… շինեցիք: Վաղո՜ւց, վաղո՜ւց գոյություն ունի այս քաղաքը. մեր պապերի պապերի պապերը չգիտեն անգամ, թե ով և երբ ձգեց այս քաղաքի հիմերը: Այս քաղաքն այնքան հին է, որքան աշխարհը:

Մռայլներով լեցուն աչքերը մեծ թափառականը նետեց քաղաքի վրա – փողոցներում և շուկաներում խռնվում էին այրեր, կանայք և երեխաներ:

Ոմանք աճապարում էին մտահոգ, ոմանք արևի տակ զվարճանում էին անհոգ, և երեխաները զվարթ խաղ էին անում աղբյուրների շուրջը:

Կանայք՝ պճնված վարդերով ու գոհարներով, հրապուրում էին հավերժական ճշմարտի և գեղեցիկի մասին, մարդու տիեզերական արժեքի և նրա գերագույն նպատակների մասին…

Նորից մի դաժան ծաղր գալարվեց՝ անապատի օձի պես՝ Շիդհարի մթագին շրթների վրա:

Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին… Սակայն, ով փրկարար պատրանք… Իրենց խխունջից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ են սահմանում անհունին և անսահմանին… Անապատի վրայից սահող ամպի ստվերից ավելի մտահոգ է ձեր էությունը… Սակայն տեսնենք վաղը ի՞նչ է լինելու…»:

Եվ վերստին քայլեց անդուլ դարերի թափառականը:

Անցան դարեր, նորից դարեր, և եկավ վաղը:

Հիշեց Շիդհարը վաղեմի քաղաքը և ուզեց այցելել նրան:

Երբ հասավ նրա սահմաններին, տեսավ, որ քաղաքի տեղը հիմա փռվում է մի դաշտավայր՝ ծաղկավետ և գարնանագեղ: Գետակի ափին պարում էին ու երգում նորաբողբոջ աղջիկները: Եվ հովիվը արածեցնում էր խաշների հոտը սրնգի դայլայլների տակ:

- Ո՞ւր գնաց այստեղից քաղաքը,- հարցրեց նա հովվին:

- Ի՞նչ քաղաք,- ապշեց հովիվը:

- Տարիներ առաջ իսկ և իսկ այս կողմերն էի. մի մարդաշատ քաղաք էր եռում այստեղ: Նրա մասին է խոսքս…

Հովիվը քար կտրած նայում էր Շիդհարին:

- Ե՞րբ առաջ եկավ այս դաշտը,- հարցրեց Շիդհարը:

- Ի՞նչ սարսափելի բաներ ես ասում. ես քեզ չեմ հասկանում… Մեր պապերի պապերի պապերը, և էլի առաջ, այստեղ իրենց հոտերն են արածեցրել: Այս դաշտը կար աշխարհի սկզբից և կմնա…

Հինավուրց թափառականի մռայլ շրթները նորից գալարվեցին, և արգահատանքի մի հայացք դաշույնի պես շողաց նրա աչքերում:

«Եղկելի մարդիկ, երեկը նրանց համար գոյություն չունի, այսօրն է նրանց համար միակ իրականը… Երգում են, պարում և չգիտեն, որ իրենց ոտների տակի երեկվա գերեզմանը վաղը իրենց գերեզմանն է լինելու…»:

Եվ նորից քայլեց Շիդհարը: Ջյունաթույր մազերը ալեկոծվում էին նրա մթին ճակատի վրա: Քայլում էր և հոգու խորքում դառնագին խորհում մարդու միամտության և նրա գոյության ակնթարթի վրա և բոլոր իրերի գահավերժ հոսման վրա…

ՊԱՏՐԱՆՔ

Երանի՜ նրան, ով պատրանք ունի, որովհետև նրա համար աշխարհը հայրենի հարկ է դառնում՝ քաղցր ու ջերմագին:

Երանի՜ նրան, ով կարող է գեղեցիկ ստով խաբվել, որովհետև իրական աշխարհը դառն է ու դաժան, և մարդկանց կամքը՝ չար ու անհիրավ:

Եվ, վերջապես երանի՜ նրան, ով երազ ունի, որովհետև երազն է, որ սփռում է իր ծաղկաբույր պարտեները՝ օձուտ ու տատասկոտ անապատների վրա:

Մի գուսան է եղել՝ անտուն ու թափառական: Գյուղից գյուղ շրջում էր նա պատմելու համար հինավուրց զրույցները բարի և ազնիվ գործերի մասին. Հյուսում էր խոնարհ խրճիթների մեջ իր տեսիլները մի արդար ապագայի մասին, և վառում էր պատանիների սրտերը ճշմարտի սիրով, ու քարացածների քնած խիղճը վրդովում մի պահ:

Եվ այսպես վաստակում էր այն պատառ հացը, որ ստիպված է մարդ ունենալ ամեն օր:

Աշնան մի օր, երբ մի գյուղից մյուս գյուղն էր գնում նա, մշուշը ծածկեց նեղ արահետը. մոլորվեց գուսանը մացառների մեջ, գիշերվա մութը վրա հասավ, և զայրագին փչեց հյուսիսի հողմը, որ անպարտելի ցրտով այրում էր անպատըսպար գուսանի մարմինը:

Դեգերում էր նա մի խորշ, մի խոռոչ գտնելու համար՝ պաշտպանվելու կատաղի հողմից. և հանկարծ հանդիպեց մի լքված հյուղակի, որի բաց դռնից տեսավ բուխարիկի մեջ երկու մեծ, բոցավառ կայծեր՝ երկու մեծ, բոցավառ ածուխի նման. շտապ ներս մտավ գուսանը, նստեց բուխարիկի մոտ և սառած ձեռները տարածեց ածուխի վրա. ջերմությունը ձեռքերից տարածվեց ողջ մարմնի մեջ. տաքացավ գուսանը, և ձեռքերը անընդհատ բռնած մշտավառ ածուխի վրա՝ գլուխը հենեց պատին և ննջեց երջանիկ մանուկների պես:

Երբ հողմը դադար առավ, պարզվեց երկինքը և նշույլող լույսը շողաց լքված խրճիթում, գուսանը զարթնեց և տեսավ, որ բուխարիկի մեջ կրակի փոխարեն մի կատու է ծվարել՝ ոսկեղեն աչքերը երկու ածուխի պես բոցավառ, որ, սակայն, դաժան գիշերին փրկեցին նրա կյանքը:

Երանի՜ նրան, ով պատրանք ունի, որովհետև նրա համար աշխարհը հայրենի հարկ է դառնում՝ քաղցր ու ջերմագին:

Երանի՜ նրան, ով կարող է գեղեցիկ ստով խաբվել, որովհետև իրական աշխարհը դառն է ու դաժան, և մարդկանց կամքը՝ չար ու անհիրավ:

Եվ, վերջապես երանի՜ նրան, ով երազ ունի, որովհետև երազն է, որ սփռում է իր ծաղկաբույր պարտեները՝ օձուտ ու տատասկոտ անապատների վրա:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ Վառոտաց սերմ

Նրա կյանքում շատ կանայք են եղել: Նա սիրել է սիրել: Նա աստվածացրել և գետին է տապալել, շոյել և ցավեցրել է, սիրո ամենագեղեցիկ բառեր է շռայլել և լուտանք թափել: Նա նման է եղել մեղմ զեփյուռի և անմիջապես դարձել է մրրիկ: Նա մեծ սիրահար է եղել, նույնքան մեծ, որքան՝ մեծ պոետ:

Նա խենթ է եղել:

Կանայք նրա կյանքում տարբեր են եղել՝ խաբուսիկ, կամակոր, ազնիվ, ինքնամոռաց: Ոմանք խաղացել են նրա հոգու հետ, ոմանք եղել են գոռոզ և փշրել են նրա սիրտը, ոմանք խենթացրել են իրենց գեղեցկությամբ, զգլխել նրան և թողել ծեռնունայն:

«Անցնում են կանայք, մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից ցնցող, հրապուրիչ, խոցող, խայթող, տանջող, չարչարող: Կայծակի պես, ահաբեկչի պես: Սարսափելի է... ծփուն ազդրեր, թրթռուն ստինքներ, հրաշքով լցված աչքեր, լույսի պես մարմիններ, ցորենի՛ պես թևեր, ցորենահացի՛ պես: Ուտելու հացեր, որ բնավ չեն հագեցնում»:

Ինչպիսի համեմատություն... Ընդհանրապես, կանանց մասին պատկերացումները և տպավորությունները անձնական փորձառության արդյունք են և իր զգացածի, ապրածի, հասկացածի ամբողջությունը նա ամրագրել է հանճարեղ-դաժան տողերով.

«Եվ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ, հավերժ նանրամիտ,

Որ հացդ է սիրում համբույրի մեջ սուտ և քո գրկի մեջ գրկում ուրիշին...»:

«Աբու-Լալա Մահարի» 2-րդ սուրահ

Ես կանանց մասին ավելի սոսկալի բնորոշում չեմ լսել: Լինելով կին՝ ես պետք է որ միանշանակ չընդունեի այս մեղադրանքը: Բայց այս տողերը գրված են մի այնպիսի ներքին լարումով և համոզմունքով, որ ես համաձայնում եմ դրանց. «...խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին»...

Այս տողերը մի տեսակ ճամփաբաժան էին առաջին մեծ սիրո, երկրորդ ոչ պակաս մեծ սիրո, ամուսնական կյանքի և դրան զուգահեռ ընթացող սիրահարությունների միջև: Իսկ սերը նրա կյանք սողոսկեց հանկարծակի և անսպասելի, ինչպես սովորաբար անում է:

Իսահակյանը ուսանում էր էջմիածնի Գևորգյան ճեմարանում, երբ Ալեքսանդրապոլում մեծանում էր նրա մորաքրոջ թոռնուհին՝ Շուշանիկը: Արձակուրդին Ավետիքը վերադառնում է Ալեքսանդրապոլ և քաղաքավարական այց կատարում զարմիկներին: Դա 1891 թվականն էր: Ամեն բան շատ սովորական էր, եթե չհաշվենք, որ գարուն էր իր յուրահատուկ սիրատոչորայինտրամադրությամբ: Եվ ահա, այս տրամադրության ակնհայտ առկայության պայմաններում հայտնվում է Նա: Շուշանիկը ներս է մտնում ասեղնագործությունը ձեռքին... Աշխարհում լռում են բոլոր ձայները, Իսահակյանի ականջին հասնում է միայն օրիորդի երկար փեշի շրշյունը: Աշխարհում խամրում են բոլոր գույները, Իսահակյանը տեսնում է միայն մեծ, սև, գեղեցիկ աչքեր, դալկահար դեմք և վարդագույն շրթներ, որոնք մեղմորեն, Գյումրվա թեթև առոգանությամբ արտաբերում են «փարև ձեզի» նախադասությունը: Ուրիշ ոչինչ չի հիշում:

Տպավորության և իր հետ կատարվածի մասին առավել սթափ և վերլուծաբար Իսահակյանը մտածում է տանը և գրառում օրագրում. «Օ՜, խորամանկ, փորձող: Ա՜խ, չնաշխարհի՛կ Շուշանիկ, դու գերեցիր ինձ: Որքա՜ն դյուրաթեք, շուտ խաբվող և ընկճվող եմ ես կուսական սրտի առաջ»: Ինչպիսի՜ քնքուշ, անմեղ կարծիք սեփական խառնվածքի մասին: Ավետիք Իսահակյանը անկեղծորեն հավատում էր իր գրածին, այսինքն՝ որ կանայք տիրապետում են դյուրաթեք տղամարդկանց խաբելու հնարքներին, օրինակ՝ ինքը, չէր ուզում, բայց խաբվեց: Ես կարող էի մտածել, որ սրանք ընդամենը տասնվեցամյա, սենտիմենտալ պատանու անկարևոր մտքեր են, համոզված եմ, որ այս տողերի խորքում, ենթագիտակցորեն նա թաքցրել է կնոջ և տղամարդու մարդկային հակասության այն գաղափարը, որ շատ տարիներ հետո պիտի պայթեր Աբու-Լալա Մահարու երկրորդ սուրահում և բացի այդ պիտի դառնար կանանց հետ իր հարաբերությունների հաստատման բանաձևը՝ «խորամանկ-չնաշխարհիկի» և «դյուրաթեք-խաբվողի» միջև անզուսպ ձգողականության անհրաժեշտությունը: Դա հետո, իսկ առայժմ նա տարված էր Շուշանիկով և երջանիկ էր: Օրիորդից ստացած ամեն մի նամակ նրան թև էր տալիս ճախրելու:

«Ես նրան սիրում եմ իդեալական սիրո ամենաընդարձակ ծավալով: Նրան սիրում եմ անվերջ, հավիտյան»:

Ինչպիսի՜ անպատասխանատու հայտարարություն: Ինչպես կարող էր տասնվեցամյա պատանին հավիտյան կոչել իր առաջին սերը: Ասենք, նա կարող էր այդպես կոչել, հե՛նց որովհետև տասնվեց տարեկան էր և չգիտեր դեռ, թե այս աշխարհում ինչ է կատարվում սերերի հետ: Բայց արի ու տես, որ այդ սերը իրոք հավիտյան եղավ: Շուշանիկ Մատակյանը մնաց Իսահակյանի ուղեղի և սրտի մեջ ընդմիշտ իբրև սեր-ցավ: Դա սիրո զարմանալի պատմություն է, որը չավարտվեց անգամ նրանց մահից հետո և չի ավարտվի երբեք, քանի որ արդեն անմահացել է Վարպետի սիրային քնարերգության մեջ:

Լավ, իսկ ո՞վ էր Շուշանիկ Մատակյանը՝ այդ տասնհինգամյա աղջիկը, որ կարողացավ փշրել, ավերել, բզկտել երիտասարդ տղամարդու սիրտը և ընդմիշտ մնալ պաշտելի: Ի՜նչ հմայք, դյութանք կամ գուցե կախարդանք կար այդ փոքրիկ կնոջ մեջ:

Ինչպես ասացի, Շուշանիկը Իսահակյանի ոչ շատ հեռավոր արյունակից ազգականն էր: Նրա մայրը ինքնիշխան և հաշվենկատ կին էր: Հայրը՝ Արամ Մատակյանը, նոտար էր և շատ ազնիվ մարդ: Դժբախտաբար 1894-ին նա անձնասպան է լինում այն բանից հետո, երբ ամբաստանվում է մի հրեա վաճառականի փաստաթղթերի կեղծարարության մեջ: Հետո իհարկե պարզվում է, որ փաստաթղթերը կեղծվել էին հենց այդ ջհուդի կողմից, և նոտար Մատակյանն անմեղ էր: Բայց ատրճանակի ձգանն արդեն քաշված էր: Ասում են նաև, որ վերջին տարիներին նա շատ դյուրագրգիռ ու նյարդային էր, և մեղավորությունը փնտրում էին տիկնոջ՝ Թագուհու մեջ, որը հաճախ իր անունն ընկալում էր բառի բուն իմաստով և մարդկանց հետ վարվում ըստ այդմ: Իր իշխանությունը և միահեծան կամքը այս կինը բանեցրեց նաև իր աղջիկների ճակատագրում՝ ամուսիններ ընտրելիս: Օժիտ, չերվոնի բիլազուկներ, եվրոպական դիպլոմ, փող և մարդու կյանքը թվաբանություն դարձնող տիկին Թագուհու նաև այլ ձգտումների մեջ, Ավ. Իսահակյանը պարզապես չէր տեղավորվում ոչ մի կերպ՝ չնայած այդ թվաբանության փոխարեն առաջարկում էր մի բան, որն անգին էր, անչափ, անսահման՝ իր սերը: Բայց իզուր, սակարկելն անիմաստ էր, որովհետև երիտասարդի կողմից առաջարկվողը ապրանք չէր, ուստի և պահանջարկ չէր վայելում այս ընտանիքի կառավարչի՝ Թագուհի մայրիկի կողմից: Իսկ նրա ասածը ասած էր, և աղջիկները հոժարակամ հպատակվում էին, որովհետև վախենում էին ոչ այնքան մորից, որքան քաղաքից: Քաղաքը ի՞նչը կաշեր աղքատ ուսանողի և Թակուհու աղջկա կաբին, քաղաքը ի՞նչ կըսեր, քաղաքը ի՞նչը պիտի հասկնար, օր Շուշիկն ու Ավիկը սիրահարված են, քաղաքը չի պատկերացնե, թե ինչը կարելի է սիրահարվել առանց, ըսենք, ջեհեզի, ֆայտոնի, Նիկալայի օսկէ փողերի... քաղաքին պետք չէ արհամարհել: Հետո բոլորը գիտեին, որ նրանք ազգականներ են, և նման դեպքերում միայն եկեղեցին կարող է թույլատրել ամուսնությունը: Ավետիքը պատրաստվում էր դիմել, բայց չհասցրեց: Մեկնեց ուսումը շարունակելու Վիեննա՝ մտածելով վերադարձի մասին:

Հենց այս բացակայությունն էլ Մատակյան ընտանիքն օգտագործեց հանգիստ պայմաններում առանց երիտասարդ, տաքարյուն սիրահարի ներկայության, ոչ երիտասարդ և, համապատասխանաբար, ոչ տաքարյուն և ոչ առանձնապես սիրահարված տղամարդու հետ Շուշանիկի ամուսնության նախապատրաստության համար: Հիմա արդեն տասնյոթամյա Շուշանիկը կնության տրվեց գյումրեցի ուսյալ, կրթյալ, Լայպցիգի և Ենայի համալսարանների շրջանավարտ, երեսունչորսամյա մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանին:

Ավետիքի քույրը շտապեց այս բոթը ժամ առաջ հասցնել եղբորը:

«Պարոն Միրաքյանի և Շ-ի հարսանիքը շատ շքեղ էր,- գրում է Գինովաբեն եղբորը,- Շուշանիկը շատ լավ էր հագնված... Միրաքյանը շատ մարդ էր կանչել թե՛ վաճառական դասակարգից, թե՛ ուսուցչական... Շուշանիկը քեզի համար հարցուց, թե Ավետիքը ի՞նչդ է, որտե՞ղ է: Ես էլ ասացի, թե Վենա է, հետո պետք է գնա Գերմանիա կարդալու: Շատ ուրախացավ...»:

Հարսանիքի օրը Շուշանիկը հիշում և լուր է ուզում առնել իր սիրած տղայից: Ինչպե՞ս հասկանանք: Արդեն գլխի՞ էր ընկել իր կատարած քայլի անխոհեմության մասին՝ ամուսնանալ առանց սիրելու և հիմա բաղդատում էր Միրաքյանին Իսահակյանի հետ: Իսկ ինչո՞ւ ուրախացավ՝ լսելով, որ Ավետիքը Վիեննայում է և պիտի Գերմանիա անցնի ուսումը շարունակելու համար: Ուրախ էր նրա հաջողություններո՞վ, թե՞ հաշվարկեց, որ այդպիսով վերջինս երկար ժամանակ չի հայտնվի Ալեքսանդրապոլում և չի պղտորի իր և Միրաքյանի հովվերգական կյանքը, որ հեռվում գտնվելով, նա անվտանգ կլինի:

Իսկ ի՞նչ ապրումներ ունեցավ Իսահակյանը նամակը կարդալով.

«Վիեննայում էի, երբ Գինեվաբեից նամակ ստացա, թե Շուշիկը ամուսնացավ, գժվեցի, ինձ գցեցի Լայպցիգ՝ ընկերներիս մոտ մխիթարվելու: Բանաստեղծություն հորինեցի ճանապարհին. Դա՛րդս լացեք...»:

Իսահակյանը այնքան զայրացած և նեղացած էր, որ մոտ մեկ տարի ոչինչ չկարողացավ գրել հիշատակարանում, երբ մեկ տարի հետո մի քիչ ուշքի եկավ, գրեց. «Ախ, Շուշիկի համար էի ես ապրում, իմ կյանքի ծանրության կետն էր, նրա շուրջ էր պտտվում իմ ողջ գոյությունը... Ա՜խ, ինչքա՜ն սիրում էի և ինչքա՜ն մաքուր և հրեշտակային... ինչքան լացել եմ նրա համար, ճեմարանում, ծառերի տակ, հոնգուր-հոնգուր լացել եմ... մենակ լացել եմ... երազում լացել եմ, անկողնում լացել եմ: Ա՜խ, Շուշի՛կ, դու ո՞նց մոռացար ինձ, ինձ՝ քու պաշտողին»:

Գերմանիայում Շուշանիկի հանդեպ կարոտը ահռելի չափերի է հասնում: Այս սառը, անկիրք Եվրոպայում, ո՛չ ոմն օրիորդ էլիզայի համբույրների, ո՛չ ուրիշ թեթև կանանց գրկերի մեջ նա չկարողացավ վերագտնել ինքն իրեն: Շոպենհաուեր և Նիցշե, ահա այն փիլիսոփաները, որոնք սիրով ընդունեցին Իսահակյանի վիրավոր հոգին և էլ ավելի խենթացրին նրան:

«...Պեսիմիզմը թվում է ինձ համար ճշմարտություն, իսկ օպտիմիզմը՝ կեղծավորություն,- այսպես էր մտածում Իսահակյանը 1894-ին: Ես այս պնդմանը համակարծիք լինելու պատրաստ չեմ և, տա Աստված, երբեք չլինեմ: Բայց կփորձեմ հասկանալ, թե ինչը կարող էր երիտասարդ, տաղանդավոր տղամարդուն ստիպել այդպես մտածել և ինչը կարող էր նրան անվերջ երևակայության ոլորտները տանել և խանգարել իրական կյանքում ոտքերի վրա ամուր կանգնելուն՝ սիրուհուց բաժանված լինե՞լը, Հայրենիքից հեռու լինե՞լը, անփող վիճա՞կը, թե՞ այս ամենը միասին: Չգիտեմ, գուցե նաև ուրիշ պատճառներ կան, օրինակ՝ Նիցշեն իր Գերմարդով՝ Գերմարդ, որ հնարավոր էր լինել միայն երազներում: Երազնե՛ր, սրանք փախուստի այն վայրերն են, որտեղ կարելի է թույլ տալ ամեն բան, որտեղ կարելի է լինել՝ ինչպիսին ուզում ես՝ չզգալով որևէ պատասխանատվություն: Երազներ՝ վտանգավոր վայրեր, որտեղ երկարատև հյուրընկալումը և որոնց ապավինումը կարող են լրջորեն վնասել ներաշխարհը և որտեղ սովորաբար կորչում է իրականության զգացողությունդ: Իսկ դա արդեն ահազանգ է: Իսահակյանը երևակայության ոլորտում էր: Նիցշեն արել էր իր գործը, Նիցշեն սնել էր նրան: Գերմարդու մտացածին, պատրանքային կերպարի զորությունը շոյում էր Իսահակյանի ինքնասիրությունը: «Ես պիտի հերոս լինեմ՝ պսակված ուռու պսակով, մոր արցունքով, Շուշանիկի ժպիտով, ընկերներիս համբույրով: Հերոսի գրիչը՝ ձեռքիս, թուրը՝ մեջքիս, վերքերը՝ կրծքիս, մտքի ու վշտի կնճիռները ճակատիս՝ Հերոս-Հերոս...»: Եվ նորից Շուշանիկի անունը, կարծես այս կնոջ համար է հերոսանալու երազ-ծրագիրը: Կարծես Շուշանիկն է պատճառների պատճառը Իսահակյանի համար: Շուշանիկը հետապնդում է նրան ամենուր, Շուշանիկը դարձել է իդեա ֆիքս:

Չեմ կարող պնդել, թե Շուշանիկի համար էլ Իսահակյանն էր դարձել սևեռուն միտք, բայց որ այս մարդու մասին հիշողությունները և կարոտը ինքնաբերաբար միախառնվել էին նրա ամուսնական կյանքին, փաստ էր: Երկու հակադիր իրողություններ, երկու իրարամերժ բաղկացուցիչներ ապրում էին մեկ երիտասարդ կնոջ ուղեղում, սրտում, հոգում և կարելի է պատկերացնել, թե ինչպես էին խանգարում նրան, ցավեցնում նրան և ինչպես էին նրան դժբախտ զգալ տալիս: Նա ապրում էր ամուսնու հետ, բայց չէր ապրում նրանով: Շուշանիկը հայ կին էր՝ ավանդապաշտության գերի, զսպվածության դասեր սերտած և ամուսնությամբ վերջակետ դրած իր անձնական, իգական երջանկության հույսերին: Նա դեռ միայն մեկ ճանապարհ էր գտել հույզերի պոռթկման համար՝ բանաստեղծություն գրելու ճանապարհը: Դա հարմար էր այնքանով, որ հնարավոր էր իրականացնել ոչ բացահայտորեն, այլ ալեգորիկ:

Իմ սրտիս երազ, միակ հրեշտակ,//Մի՞թե դու անդարձ կորար հավիտյան:

Համաշխարհային սերերից հայտնի են շատ այդպիսի սերեր՝ միմյանց տանջող, միմյանցից հեռու, միմյանց անհասանելի: Ինչո՞ւ են մարդիկ սիրում տառապել, ինչո՞ւ չեն կարողանում կտրուկ և խիզախ քայլի դիմել՝ ձեռնոց նետել հասարակական ստին ու երջանկանալ: Կամ էլ մեկընդմիշտ մաքրել ուղեղը տանջող մտքերից, փակել հիշողության այդ օջախը:

Ես այս հարցը ինձ եմ տալիս, և գիտե՞ք՝ ինչ եմ պարզում, որ դժվարը ոչ թե ձեռնոց նետելն է կամ հասարակության տեսանկյունից անխոհեմ քայլ անելը և ի հեճուկս ամենի միմյանց հասնելը, այլ դժվարը ենթագիտակցության մեջ մխրճված կասկածը, վախը հաղթահարելն է: Վախ, որ գուցե անվերջ միասին լինելով՝ այդ սիրուց բան չի մնա, և դա անդառնալի կորուստ կլինի: Գուցե իսկապե՞ս սերը հզոր է, երբ վերալիցքավորվում է խոչընդոտների հաշվին, հոգեկան լարումների, փոթորիկների մեջ: Ոչ ոք չգիտե, թե ինչ կմնար Իսահակյանի և Շուշանիկի սիրուց, եթե նրանք ամուսնանային և ապրեին կյանքի սովորական սցենարով: Բայց քանի գրոշ արժեն դատողությունները ու փիլիսոփայումները, եթե սիրահարության հոգեվիճակում մարդիկ սովորական կամ անսովոր սցենարի մասին պարզապես չեն մտածում:

Նարինե ԹՈՒԽԻԿՅԱՆ

«Խոստովանություն» գրքից՝

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

««Ուստա Կարոն» վեպ-էպոպեա է. այն արտացոլում է պատկերվող դարաշրջանի իրադարձությունները, հանդես է բերում բարդ հարաբերությունների մեջ գտնվող մեծաքանակ կերպարներ»:

Իսահակյանը վեպն սկսել է գրել 1910թ. ապրիլի 21-ից և աշխատել է տենդագին ոգևորությամբ: Վ.Աբովյանին և Գ.Լևոնյանին ուղղված նամակներից տեղեկանում ենք, որ Վարպետին չի գոհացրել ստեղծածը, և քսանական թվականների կեսերին մեծ լարումով աշխատել է այդ ուղղությամբ. «Ես դժգոհ եմ եղածից… Ես նորից եմ գրում այն, 1000 էջ նորից եմ գրելու: Բայց պետք է լինել Ուստա Կարոյի միջավայրում, տեսնել, ստուգել նորից տիպերն ու պատկերները, երկիրն ու օդը, բարբառները…»: Ակնհայտ է, որ Վարպետն իր «մտածումների», իր «տեսիլի» իրականացման հարցում կարևոր է համարում լեզուն, այդ թվում նաև բարբառները: Բարբառային բառերին ու ձևերին Իսահակյանը դիմում է միջավայրի ու կերպարների իրապաշտականությունն ապահովելու, բնական միջավայր և համապատասխան բնավորություններ կերտելու, համապատասխան լեզվական մթնոլորտ ստեղծելու նպատակով:

Իսահակյանի արվեստի կարևորագույն առանձնահատկություններից մեկը՝ ժողովրդայնությունը, ապահովված է նախ՝ ժողովրդական լեզվամտածողության խոր զգացողությամբ: Ժողովրդայնությանը նպաստել են դարձվածքները, համագործածական հասարակ բառերի փոխաբերացումները, բարբառային բառերի և ձևերի գործածությունները, առած-ասացվածքների և այլ միջոցների տեղին կիրառությունները: Այդ միջոցներից Իսահակյանը հատկապես օգտվել է ամենատարբեր խավերի պատկանող հերոսների կերպարներն իրենց բնորոշ բնավորության գծերով կերտելու, տիպականացնելու համար: Վեպի մասին խոսելիս ուսումնասիրողներն այն ինչ-որ իմաստով ինքնակենսագրական են համարում՝ նկատելով, որ Ուստա Կարոյի բերանով Վարպետն «արտահայտում է պատվի ու արդարության, սիրո և մարդասիրության սեփական ըմբռնումները, պարզում ու պարզաբանում ճաշակած ցավերն ու դառնությունները», այլև իմաստուն հայացք նետում ժողովրդի կենցաղի և հոգեբանության ծալքերին: Ուշագրավ է գրողի դիմումը բնության հավերժական երևույթներին, ինչպես հավասարը հավասարին: Աստղալից երկնքի տակ զրուցելիս Ուստան Հարութին ասում է.

- Մարդ գոնյա մի գիշեր էդոնց մեկի տեղն ըլնի, մեկ պստիկ աստղ ու վերևեն աշխարքին նայե, ամեն գեղ ու քաղաք, երդիկներեն ու պատուհաններեն ներս, ինչեր կտեսնի, իմաստուն կդառնա: Նկատելի են ժողովրդական մտածողության լեզվամիջոցների հմուտ իրացումները բնական, կենդանի խոսք ստեղծելու համար: Ուստայի և Հարութի զրույցը հիշեցնում է ժողովրդական ասք, բանահյուսական նմուշ, որի հեղինակը, դժվար է ասել, ժողովո՞ւրդն է, թե՞ նրա ուսյալ զավակը, որ իր աշխարհընկալումը ներկայացնում է շատ տեսանելի, բոլորի համար հասկանալի, ծանոթ առարկաների ու միջավայրի երևույթների բանաստեղծականացմամբ: Հերոսների, տվյալ դեպքում՝ հեղինակ-հերոսի և Հարութի հոգեվիճակին համահունչ են բառագործածությունները. «Բայաթու պես անուշ գիշեր էր…»:

Համեմատության եզրը՝ բայաթին, արդեն բաց է անում աշխարհների ու ժողովուրդների մշակույթին ու կենցաղին, մարդկային հոգիներին քաջատեղյակ Ուստայի ներաշխարհը. նաև Արևելքն ենք զգում: Զրույցի միջոցով աստիճանաբար բացվում են մարդկային կյանքի բոլոր շերտերը՝ համապատասխան լեզվատարրերի շնորհալի գործածություններով, որոնք տարբեր են և նույնարժեք: Վեպի գլուխներից մեկում գյուղացիները Ուստա Կարոյի մասին ասում են. «Ուստան նմանը չունեցող խոսքաշեն մարդ է», ապա՝ «Ուստան շատ տեղեր թափառելով, բնականաբար, իր լեզվի մեջ թափանցել էին զանազան գավառներից որոշ տարրեր, ձևեր ու ոճեր, որով նրա խոսած լեզուն տարբեր բարբառներից մի տեսակ խառնուրդ էր դարձել»:

Իսահակյանը ոչ միայն գործադրում է մայրենի լեզուն, այլև հարստացնում է նրա գանձարանը, մյուս կողմից՝ օգտվելով մայրենի բարբառի (և ընդհանրապես բարբառների) բառերից՝ դրանք ծառայեցնում է կերպավորման արվեստին, կերպարների խոսքի տիպականացմանը: Բերենք մի քանի բնորոշ օրինակ. «աստված» բառը տարբեր հերոսների շուրթերին հնչում է այսպես՝ Ուստային ուղեկցող և փոքր-ինչ «բարեկրթված» Փիլոս. «Աստված ամեն մարդու սրտով իրան կուտա», «Ասպած է ղրկե էդոնց մեր հայի ոխն առնելու համար» գյուղացիներից մեկը, այլ բարբառակիր՝ աստուծ, հոգևորականների շուրթերին՝ տյառն, արարիչ և այլն, կամ՝ երկար-երկայն-երկաներկեն տարբերակները գործածված օրինակներում անպայման ընդգծված ոճական արժեք ունեն. զրուցակիցներից մեկը մաղթում է «երկար կյանք», մյուսը՝ «երկեն արև», Ուստան՝ «երկան», մինչդեռ հրաշք աղջկա մազերը «ջրի պես երկայն էին»:

Բարբառային-խոսակցական բառաշերտին պատկանող շատ բառեր, որոնք մեծ արվեստով գործածել է Վարպետը, այսօր արդեն գրեթե գործածական չեն և ներկայացնում են բարբառի՝ վեպի ընդգրկման ժամանակաշրջանի պատկերը: Այդպիսիք են ***իշխնալ, նամարդ, կնիկարմատ, տեղոցտեղ, մերեմեր, հնճարել, նեղսրտել, շենլիք, մեղդնել*** բառերը:

Ճիշտ է դիտարկումը, թե կերպարի տիպականացումը, լեզվական անհատականացումը բավական դժվար հնար է և գրողից պահանջում է լեզուն զգալու, տիպականը, բնորոշը գտնելու, մարդկանց մտածելակերպին ու հոգեբանությանը համահունչ դարձնելու կարողություն, գրական վարպետություն, կենսափորձ:

Այդ նշված բնորոշ տարրերից է օտար բառերի քաջահմուտ գործածությունը վեպի լեզվում, որով Վարպետը ոճավորել է հերոսներից յուրաքանչյուրի խոսքը՝ ըստ սոցիալական պատկանելության, ըստ անհատական լեզվամտածողության, նաև ըստ լեզվի զարգացման տվյալ ժամանակաշրջանի վիճակի:

Այսպես՝ գեղջկուհու խոսքում «ղայֆա» բառը բնական է հնչում և պարզապես փոխարինելի չէ. «Քեռեկինս մե շալ ուներ… գունը ղայֆայի, վրան կաս-կապուտ նիշաններ…»: Հաջորդ օրինակում արդեն նկարագրվող միջավայրի և ազգային պատկանելության պահանջով են գործածվել օտար բառեր «….. Լսող-կատարողները կերթան մեր դրախտն ու իրանց ջենանթը, չկատարողները կերթան մերոնց դժոխքն ու իրենց ջեհենեմը»: Այդպես նաև բայաթի, յալլա, դարդ, շյուքուր, շեյխ, չայդան, լոխման և այլն:

«Գյումրեցի կապիտան Ղազարը» գլխում, կերտելով հին զինվոր Ղազարի կերպարը, որը կիսահրական-կիսաէպոսային է, Իսահակյանը «տեղին և շնորհքով» գործածել է ռուսերենից ժողովրդի կատարած բազմաթիվ փոխառություններ, որոնցով անհատականացրել է կերպարները և ստեղծել նրանց միջավայրի տիպական պատկերներ, ինչպես՝ «Լագըր մտանք-չմտանք՝ նամեստնիկի ծառաները՝ թթված դեմքերով, եկան առաջներս կտրեցին…»: Այդպես էլ բուտիլկա, սամովար, ստական, ինգլիշ, ֆրանցուզ, պոլկ, կավկազսկի, կազարմա:

Վարպետը մտքերն արտահայտելու համար նաև նոր բառեր է կազմել, ինչպես՝ «Կայծակը նրա այս մեծխոսիկությունը նույնպես վերագրեց գինուն»: Ածանցների բառակազմական նշանակությունը Վարպետը հմտորեն է գործածել համապատասխան երանգավորում հաղորդելու համար: Այդպես ահռիկ (երազ), զռնչուն, ժաժուն, աշխարհանցում, գտնունք, փոքորունք և այլ բառերում:

Կան իմաստային տեսակներից դիպուկ նորակազմություններ, ինչպես՝ աշխարհաժուռ, աշխարք-արարատ, աշխարհաժաժ-կոտորում, բաժակախոս, գլուխ-վարպետ, արնաժեռ, հազարարհեստ, արևազվարթ, հնութ-բնութ, զվարթբամբառակ, ուրվանալ և այլն: Երկրաշարժի կործանարար էությունը լիովին բացահայտում է «աշխարհաժաժ-կոտորում» բառը, որը հիշեցնում է 1926 թվականի երկրաշարժի առիթով ժողովրդի հորինած երգերը. «Ժամը վեցին ժաժքը ելավ, Գյումրին ավիրեց»:

Վարպետը մի առիթով գրել է. «Իմ դեռ կիսավարտ վեպ-էպոս «Ուստա Կարոն» նույնպես իր մեջ կրում է ֆոլկլորի շատ տարրեր»: Այս իմաստով բնորոշ է հարյուրավոր դարձվածքների դիպուկ գործածությունը իր «վեպ-էպոսում» ընդգրկված տարածքների ու ժամանակների, ժողովուրդների հոգեբանությունը, մարդկանց նիստուկացը, կենսափիլիսոփայությունն արտահայտելու համար: Յուրաքանչյուր գործածությամբ դրսևորվում են Վարպետի գիտակությունը, իմացությունը, այլև ժողովրդական-ազգայինի բացառիկ անվրեպ զգացողությունը, ինչպես՝ «Մեկ քարվանիդ ճոթը բաց» զարմանալիորեն սեղմ այլաբանությամբ արտահայտվում են և՛ ունկնդիրների հիացումը Ուստայի պատմություններով, և՛ Ուստայի զրույցների իմաստուն դասերը, և՛ ասելու, պատմելու վարպետությունը և այլն: Այդպիսի հարյուրավոր ու հարյուրավոր դարձվածքներ կարելի է վկայակոչել՝ ամենատարբեր հարիմաստներով՝ ականջս բերանդ է, ականջ չկախեց, քարվանիդ գլուխը ել, խոսքիս կատա՛րն առ, «Թևս բռնողն ո՞վ է, ծովեր կրակեմ», կամ մեկ-երկու տողում տարողունակ դարձվածքները ծառայում են կերպավորմանը՝ (հարսը) «ջրի է», ողորմած «փեշը բացել է», եկողին «ծարավ հետ չի դարձնե» և այլն: Բազմաթիվ են անիծական և բարեմաղթական դարձվածքները, հուզական, հորդորական խոսք-դարձվածքները, որոնցով Իսահակյանը ոչ միայն ապահովել է ժողովրդի շունչն ու ոգու արտահայտությունը, այլև ստեղծել է կյանքի իրական պատկերներ և կենդանի բնավորություններ՝ աղքատի օրոցքը կոտրի, բերանս ծոռվի, ճզեն դուրս գալ, վարդապետի լեզու թափել, դավուլի երկու երեսը զարկել, շեն մնա օջախը, մեկ նալին տալ, մեկ մեխին, սրտի ականջ, երկինք ու գետին իրար խառնել, խելքը ջրի հետ երթալ. «Ես քեզի չի՞ ասի՝ խելքդ ջրի հետ կերթա», նաև սրտի մեջ շուն ոռնալ, գետնին գերի լինել, միտքը փսորել, (Ուստայի) կողմը տաշել, տնակոլի կնիկ և այլն:

Դեռ մեկ դար առաջ հայ աշխատավորը գործածում էր պապերից մնացած լեզվական միջոցները, ինչպես՝ «էդ տեսակ սուտը մեր գյուղացոց քովն է, որ կեղծ վկայություն կենեն, սուտ երդում կուտեն»: «…. օրթե պուկ գայի, հեռուն կանգնեի, էնոնց մարդկանց ժիժի գայի»: «Սակայն ինքն իր փոքրիկ թափառումների մեջ ուսել էր բավական երգ ու զրույց»: «Օրհնած է Ուստայի ձեռքը, շինածը քանդում չունի»: «Մեր գեղի տանուտերը էդ գտնունքի մասին քաղաք գրեց»: «Մալխազ աղան մեծ կոչունք է տալիս»: «Կանգնեց սպասին» և այլն:

Մայր ժողովրդի կյանքն ու առօրյան, ձգտումներն ու երազանքները գրականության վերածած մեծ գրողը նրա խոսք ու զրույցի բնական, հարազատ մթնոլորտն ապահովելու բազմաթիվ միջոցների շարքում, իհարկե, գործածել է նաև բարբառին (և բարբառներին) հատուկ քերականական ձևեր՝ մեծացնելով խոսքի ժողովրդայնությունը: Դրանք հիմնականում սեռական և բացառական հոլովների բարբառային կազմություններ են, այլև բարբառային հրամայականի, համադրական կազմությամբ սահմանական ներկայի հաճախադեպ գործածություններ, նաև այլ քերականական իրակություններ. «… Չես կրնա իմանա, էշերն են իրանց տիրոջներեն սորվեր էդ կամապաշտ բնույթը, թե տերերն են իշերեն սորվեր… էդոնք որ կողքի ընկնին, օխթը լուծ գոմեշ լծես, իրանց տեղերեն չես կրնա ժաժել» կամ՝ «… Ամառվան կեսօրին արևը սուտ կհանեն, էն գլխեն պտի իմանաս, որ սարերու ձունը սև դուրս պտի գա»: Այդպես էլ՝ ահու, վախու, Կավկավու (օձեր), Հաբաշու, ամոթու և այլն, հոգնակիի կազմության և դիմման բարբառային-խոսակցական ձևեր, ինչպես՝ եզրներ, ախպրտիք, գեղացիք-գեղացոց, նաև Տոնոամի, Ներսես քեհա, Փիլոս ախպար, սանհեր Մացակ և այլն:

Ժողովրդի լեզվամտածությունը, նրա կենսափիլիսոփայությունը, սոցիալական-կենցաղային հարաբերությունները, գիտակցական, մտավոր կարողությունները, բարոյական ըմբռնումները հրաշալիորեն խտացված են առածներում, ասացվածքներում, սեղմ, դիպուկ խոսքերում: Վերջիններս զարմանալի վարպետությամբ գործածել է Իսահակյանը հերոսների խոսքում՝ յուրաքանչյուրին հատուկ կամ խոսքի նյութին բնորոշ կիրառություններով տիպականացնելով կերպարներ, արտահայտելով իրեն հետաքրքրող տրամադրությունը: Բերենք օրինակ՝ «… Բախտն է աշխարքիս կառավարողը. էսօր իշխան ես, վաղը՝ հող ու մոխիր, երեկ անունդ չգիտեին, էսօր մատով ցույց կուտան քեզի, էսօր դուռդ հազար մարդ հաց կուտե, էգուց դու հացի կարոտ ես»: Կյանքի պարզ ու ճշմարտացի բանաձևումն է, իմաստուն խոսքի, ժողովրդի հակիրճ մտածողության օրինակ, որը դարավոր կենսափորձից է ծնվել:

Հակիրճ է Աբրո ամին բնութագրում ծերանալու դառնությունը. «….ա՜խ, ծերություն, չար գերություն… Կյանքն որ երկննա, համն կանցնի»…: Ներգործուն է առածը, որն ուժգնանում է հակադրույթի գործածությամբ՝ «Ցավերս՝ երկար, խնդումներս՝ կարճ…»: Կամ ծերունիների զրույցից ազդված Ուստան մտաբերում է քրդերի խոսքը. «Մեռնել էղներ, ա՜խ ծերություն չեղներ»: Չափական ու նույնահունչ բառերով կազմված խոսքերի գործածությամբ Իսահակյանը կենդանի թրթիռ, ռիթմ է հաղորդել խոսքին, մեծացրել նրա ուժը, բնականությունը: Նույն նպատակով գործածել է նաև ժողովրդի մարդկանց բառախաղերը. Ուստան «յապոններու, էդ հոպպոններու» մասին ասում է. «…էդոնք թիզ ու կես - գետնի բզեզ» կամ՝ ծխախոտ հյուրասիրելով՝ «Քաշե՛ք, քեֆերո՛ւդ աշեք» և այլն:

Վարպետն իրավացի է, թե «Սերը մարդու պզտիկ աստված կդարձնե», ուստի ինքն էլ այդ սիրով լեզու և գրականություն է արարում հավասարապես, միշտ այդ սիրով է ձեռքը վերցրել գրիչը և իրավունք տվել մեր մեծ գրագետներից մեկին՝ Ն.Աղբալյանին, ասելու. «Մեր լեզուն մի զենք է հեղինակի ձեռքին, որ նա կարողանում է վարժ ու թեթև գործածել, բայց ամենագլխավորն այն է, որ Իսահակյանը թափանցել է մեր լեզվի ոգու ներսը, այն աստիճան հայերեն է գրում, որ մեր՝ կիսահայ լեզվին սովոր ականջին երբեմն խորթ են հնչում նրա դարձվածքներն ու արտահայտությունները»:

Մարիետա
ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բան.գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԱՍՄԻԿ-70

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքում տեղի ունեցավ բանաստեղծուհի, նկարչուհի Հասմիկի «Ճախրող գույներ» մանկական բանաստեղծությունների գրքի շնորհանդեսը: 2025 թվականը հոբելյանական է Հասմիկի համար. լրացավ բանաստեղծուհու 70 ամյակը: Գրական տոնին բացի գրողներից ներկա էին Շիրակի մարզային և Գյումրու քաղաքային գրադարանների աշխատակիցներ, քաղաքի մտավորականներ: ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը ողջունեց ներկաներին, այնուհետև խոսեց բանաստեղծուհի Հասմիկի անցած գրական ճանապարհի մասին, հանձնեց ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի վկայագիր՝ գրական վաստակի համար, մաղթեց, որ պոետի գրչից մինչև ընթերցողի հոգին ընկած ճանապարհը գիրքը փառահեղորեն անցնի: Այնուհետև ելույթ ունեցան բանաստեղծ, «Շիրակ» ամսագրի գլխավոր խմբագիր Սամվել Մարգարյանը, բանաստեղծներ Սոնա Անտոնյանը, Ռոբերտ Եսայանը, Ռոզա Հովհաննիսյանը, արձակագիր Շնորհիկ Շահինյանը, «Դպիր» հրատարակչության հիմնադիր տնօրեն Հովիկ Կարապետյանը և այլք: Գրական միջոցառումը գրականագիտական ակնարկով եզրափակեց բան.գիտ.թեկնածու, դոցենտ Կարինե Մարտիրոսյանը: Բանաստեղծուհու շնորհակալանքի խոսքը հուզառատ էր, նա պատասխանեց ներկաների հարցերին, ընթերցվեցին բանաստեղծություններ «Ճախրող գույներ» ժողովածուից:



ՃԱԽՐՈՂ ԳՈՒՅՆԵՐ

«Ճախրող գույներ» ժողովածուն Հասմիկ Մաթևոսյան-Կարապետյանի՝ մանուկներին հասցեագրված գրքերից է:

Մանկան համար՝ նրան սիրելի գույների խաղը որպես մեթոդ-միջոց գործածելով՝ հեղինակը ծանոթացնում է նրան աշխարհին, բացում բնության գաղտնիքները՝ տարվա եղանակների, օրվա ժամերի, տիեզերական մարմինների, կենդանական ու բուսական աշխարհի միջոցով: Ապա մարդկային ներքին ու արտաքին հատկանիշների մասին է խոսում, որին հաջորդում են այսօր արդեն անփոխարինելի դարձած նորագույն տեխնոլոգիաները, առանց որոնց նույնիսկ մանկան աշխարհը լիարժեք պատկերացնել չի կարելի:

Գործածվում են գեղարվեստական պատկերավորման միջոցներ, առավելապես անձնավորումը: Այդպես՝ կենդանական աշխարհի ներկայացուցիչներին բնորոշ հատկանիշներ՝ նրանց սննդի, արտաքինի, բնույթի նկարագրությունը, միջատների՝ զատիկի, թիթեռի, մեղուների աշխարհը և այլն:

Ընդհանուր առմամբ, մի կողմից՝ ծանոթացում կենդանական աշխարհին՝ մերթ բնության մեջ՝ իրենց բնական միջավայրում, մերթ ակվարիումում կամ արգելոցում՝ կրկին վայրին հատուկ պայմաններում: Մյուս կողմից էլ՝ նույն կենդանիների բերանով մարդկային բարոյական հատկանիշների ներկայացումն է. «Նեղն ընկածին պիտի օգնեմ: // Որքան էլ որ դժվար լինի, // Մեկը մյուսին պիտի օգնի»:

Ընկերություն՝ մարդ-մարդ փոխհարաբերություններ, որը պետք է կարևորել՝ սկսած հենց մանկական տարիքից, ապա նաև, ինչ խոսք, կրկին կարևոր՝ մարդու և կենդանիների բարեկամությունը, որի միջոցով էլ, անշուշտ, հեղինակը սահուն ապահովում է կապը մանուկների սիրելի հայ գրողի՝ Հովհաննես Թումանյանի հետ. երեխան անգամ չի էլ զգում, որ գիտելիք է ակամա ձեռք բերում նաև «Շունն ու կատուն» բալլադի մասին՝ ընդ որում՝ սյուժետային գծերով և հասկանալի լեզվով:

Մանկան մաքրության և միամտության հենքին՝ հեղինակը բնության նկատմամբ սերն է սերմանում. ահա պապիկը, որ արևածաղկի սերմ էր ցանել, և ահա թոռնիկը, որ կոնֆետի «սերմ» էր տնկել՝ սիրելի քաղցրավենիքի ծառ ունենալու ակնկալիքով:

Գրողը խոսում է նաև նյութի, հատկապես ջրի տարբեր ֆիզիկական վիճակների մասին. միջոց, որով կրկին մանկան աշխարհազգացողությունն է ձևավորվում:

Գրքում մի քանի բանաստեղծություններ միտված են երեխային հայրենիքի, հայրենասիրության գաղափար տալու, ապա, մեծ հաշվով, սերմանելու սեր՝ հարազատ Հայաստան աշխարհի նկատմամբ, նվիրում՝ ի բարօրություն հզոր հայրենիքի: Թեմայի շրջանակներում նաև հայոց գրերն են՝ առաջին ուսուցչից՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև դպրոցում առաջին ուսուցչուհի՝ ամբողջ այդ ուղին գծելով՝ կարևորելով հայոց գրերի խորհուրդը.

«Ոսկեվառ գիրը
Ուժը մեր բազկի,
Գոյության ուժը
Մեր հայոց ազգի»:

Մանկական բակային խաղերի մասին տեղեկություններ՝ ձնագնդի, պահմտոցի, ապա նաև՝ արհեստների և մասնագիտությունների մասին է խոսում հեղինակը՝ քանդակագործ փայտփորիկ, ապա՝ շինարար Գագիկ և այլն:

Ինչպե՞ս է հասնում մանկան ափին հացն հանապազօրյա. հասկից մինչև հաց ուղին՝ կրկին, հաշվի առնելով ընթերցողի տարիքային առանձնահատկությունները, պարզ և դյուրըմբռնելի:

Բնության՝ հողի հետ կապի ներկայացումը նույնպես մանկան աշխարհայացքի ձևավորմանն ու զարգացմանն են միտված: Ապա՝ Տիեզերք՝ արևի ու լուսնի մասին, ամպերի ու ծիածանի մասին, ընդհանրապես՝ նաև մթնոլորտային երևույթների մասին:

Մեծ հաշվով, ժողովածուն արժեքավոր է՝ նախատեսված լինելով որոշակի խմբի համար և նրանց իսկ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված: Ուշագրավ է, որ գրքի նկարազարդումները նույնպես հեղինակային են, ուստի և նա՝ հեղինակը, ասելիքը նաև ամբողջացնում է այս միջոցով:

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

ՃԱԽՐՈՂ ԳՈՒՅՆԵՐ

Ինչ լա՜վն ես ամառ,
Գույներ ունես վառ:
Խայտում ենք կայտառ
Գետակում վարար:

Շոգից զովանում,
Ձկներ ենք որսում:
Ճախրող գույներ են
Մեր շուրջը բազում:

Գույն-գույն ծաղիկներ,
Թիթեռներ նախշուն:
Քեզ ենք մենք սիրում,
Ամա՛ռ մեր սիրուն:

ԱՐԵՎԻԿԻՍ

Երկու արեւ ունեմ ես,
Մեկը՝ կապույտ երկնքում
Շողշողում է, ջերմացնում,
Իսկ մյուսն էլ՝ իմ գրկում
Ճռվողում է, դայլայլում:

Ես ուզում եմ, որ հավետ
Իմ երկնքում ծիծաղեն
Երկու արեւ ոսկեթեւ,
Մեկը՝ անամպ երկնքում,
Իսկ մյուսն էլ՝ իմ գրկում:

ՓՇԵ ԳՆԴԱԿ

Հայրս եկավ, մտավ բակ,
Բերեց պարկով մի գնդակ:
Պարկը իսկույն բացեցի,
Գնդակ խաղալ ուզեցի,
Բայց փշոտ էր գնդակը:
Ձեռքս նրան պարզեցի,
Թաթիկներս ծակեցի:
Հայրս ասաց՝
- Դա գնդակ չէ, իմ բալի՛կ,
Այլ ոզնի է մի փոքրիկ:
Վախից է նա կծկվել,
Գնդակի է վերածվել:

ԽԱՏՈՒՏԻԿԸ

Թփերի մեջ բարակ մեջքը
Օրորում է խատուտիկը:
Ամպի նման թեթև,
Փափուկ իր գլխարկով,
Շորորում է խատուտիկը,
Բայց տե՜ս, նրան չպոկե՛ս,
Թե չէ խեղճին
Առանց գլխարկ կթողնես:

ԿՈՆՖԵՏԻ ԾԱՌ

Պապը ցանեց հողի մեջ
Արեւածաղկի սերմեր,
Որ սերմերը մեծանան,
Արեւածաղիկ դառնան:
Դեղին, ոսկե արեւներ՝
Ծոցերում սեւ հատիկներ:

Փոքրիկ թոռնիկը օգնեց,
Դույլով սերմերը ջրեց:
Հետո գրպանից հանեց,
Կոնֆետը հողում թաղեց,
Որ կոնֆետը մեծանա,
Կոնֆետների ծառ դառնա:

ԹՈՒԹԱԿԸ

Հագի շորն է
Նախշո՜ւն, սիրո՜ւն,
Գլխի գլխարկն է
Վառվռուն:
Մարդու նման
Խոսել գիտի,
Ինչ որ ասես,
Կկրկնի:
- Ա՜յ քեզ թռչուն զարմանալի:

ՀԱՍՄԻԿ

ԵՐԱԶԻ ԺԱՄԱՆԱԿ

Ավստրալիայի բնիկների տասնյակ հազարավոր տարիներ ձգվող, հնագույն պատմության և քաղաքակրթության առանցքը «Երազի դարաշրջան» կամ «Երազի ժամանակ» կոչված հասկացությունն է: Մասնագիտական գրականության մեջ այն առավել հայտնի է անգլերեն «Dream Time» անվանումով, որը, ավա՜ղ, բնիկների լեզուներից ընդհանրացված, թերի թարգմանության արդյունք է: Ըստ էության, «Dream Time»-ն ունի տարողունակ և բազմանշանակ իմաստ, որը գրեթե անհնար է լիովին արտահայտել այլ լեզուներում: Բնագրային մի քանի օրինակ նշյալ արտահայտության համար՝ Ngarre, Nggarni, Tjukuia, Jukorrpa և այլն, թեև ունենք այն, ինչ ունենք: Մնում է ավելացնել, որ մշակութային այլ արժեքներով սնված, այսպես կոչված, արդի մարդկանց մեծամասնության համար «Երազի ժամանակի» աշխահընկալումը մնում է խորթ ու դժվարամարս:

«Երազի ժամանակը» Ավստրալիայի բնիկների պատկերացմամբ այն սրբազան առասպելական ժամանակահատվածն է, երբ նախնիների հոգիներն ու տիեզերական էությունները արարել են աշխարհը, մարդկանց, բնությունը՝ որպես մի անբաժանելի ամբողջություն: Բնիկների համար կյանքի ընթացքը ուղղագիծ չէ, այլ շրջապտույտ, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է ու վերադառնում է իր սկզբնական վիճակներին: Նրանց համար երկիրը, հողը, ջրերը ոչ մեկի սեփականությունը չեն, և բոլոր կենդանի արարածները Մեծ ընտանիքի անդամներ եմ: Նրանց պատկերացումներում նախնիները չեն մնացել անցյալում: Նրանք ապրում են նաև ներկայում, և կապը նրանց հետ իրագործվում է ծեսերի միջոցով, որոնք հիմնականում անցկացվում են սրբազան վայրերում: Եվ վերջապես մարդկանց գլխավոր պարտականությունն է պահպանել կյանքի ներդաշնակությունը և փոխանցել Գիտելիքը:

«Երազի ժամանակ» ամենևին էլ չի նշանակում քնել և երազ տեսնել. այն արտացոլում է հատուկ հոգևոր վիճակ, որտեղ չկա տարբերություն անցյալի, ներկայի ու ապագայի միջև: Թեև բնիկները հավատում են, որ քնած ժամանակ մարդը կարող է շփվել ոգիների հետ, գիտելիք ստանալ և տեսնել նախնիների հետքերը:

«Երազի ժամանակը» պատմական ժամանակահատված չէ, այլ արտաժամանակյա տարածք՝ միշտ գոյություն ունեցող: Նրա մեջ ապրում են արարչական հոգիները, և այն ամենուր է: Այն հոգևոր իրականություն է, որտեղ արարվել է աշխարհակարգը:

Ավստրալիայի բնիկների մշակույթում «Երազի ժամանակը» խորապես արտահայտված է արվեստի՝ երգ ու պարի, նկարչության և ծեսերի մեջ՝ ծառայելով նաև որպես միջոց գիտելիքն ու կենսափորձը փոխանցելու համար:

Վերջին տարիներին Ավստրալիայի բնիկների արվեստը, հատկապես գեղանկարչությունը, դարձել է համընդհանուր հետաքրքրության և հիացմունքի առարկա՝ ցուցադրվելով աշխարհի հեղինակավոր թանգարաններում ու ցուցասրահներում՝ պատվավոր տեղ գրավելով լուրջ հավաքածուներում:

Ավա՜ղ, զգացել է տալիս մակերեսային ընկալմամբ մոդայիկ դառնալու վտանգը:

Հատկապես մեծ է հետաքրքրությունը կետային գեղանկարչության նկատմամբ, որը, ըստ էության, գեղարվեստական ծածկագիր է: Նկարների բարդ հորինվածքները, գունաբծերը պատկերում են «Նախնիների արահետները», որոնք կոչվում են “Songlines”՝ «Երգագծեր»:

Այդ պատկերները կարծես լինեն ցեղախմբերի հոգևոր քարտեզներն ու ուղենիշները: Հիշյալ պատկերների իրական իմաստը խորապես առնչվում է «Երազի ժամանակի» ծածկագրված գիտելիքի ու նշանների հետ, որտեղ վերացարկումը պահպանում է նվիրական գիտելիքը:

Բնիկների ծեսերը և երգն ու պարը ևս հիմնական պատումներ են արարչագործության մասին և փոխանցում են կյանքի օրենքների իմացությունն ու բացատրում բնության օրինաչափությունների բնույթը: Երգերը հիմնականում երգվում են ծեսերի ժամանակ, որպեսզի ոգի ներշնչեն շրջապատին և օժանդակեն երկրի էներգիայի հարատևմանը:

Պարերը, որոնք առնչվում են «Երազի ժամանակի» հետ, հոգևոր գործողություններ են. պարողները մարմինները գունազարդում են և կատարում են այնպիսի շարժումներ, որոնք կրկնօրինակում են կենդանիներին ու ոգիներին:

Բնության յուրաքանչյուր բաղադրիչ՝ լեռ, աղբյուր, ժայռ, բուսականություն, կարող է կապված լինել «Երազի ժամանակի» պատմության հետ: Բնիկները Սրբազան վայրեր են այցելում նվիրական ծեսերն անցկացնելու համար, որոնք էլ ապահովում են կապը նախնիների հետ…

Ուրախալի է այն փաստը, որ Ավստլալիայի բնիկների արվեստը տարբեր դրսևորումներով ավելի ու ավելի է բացվում աշխարհին: Չնայած հնագույն մշակույթ լինելուն՝ այն առավել քան արդիական է, ուսանելի ողջ մարդկության համար, հատկապես մայր բնության հետ ներդաշնորեն ապրելու և հարաբերվելու հարուստ փորձով:

ՎԱԶՕ
/Վազգեն-Պահլավունի
Թադևոսյան/

ՏԵՍԻԼՔԸ

Աշունն անտառափեշին էր հասնում, տերևներն իրենց դեղնապտույտ օրորն էին սկսում այնտեղ, երբ Արամն անտառ էր մտնում: Ցայգը դեռ երկինքների ճանապարհին, նա մշուշների միջով, սայլն առաջն արած, ճանապարհ էր ընկնում: Թուխպ ու մեգ ծածկում էին նրան անկոչ հետաքրքասերի աչքից, որը կարող էր հանկարծ ճանապարհին հանդիպել կամ առավոտ կանուխ՝ պետքարան վազելիս, նկատել: Գյուղում ինչ-որ մեկը խաբարբզիկի համբավ ուներ ու անտառ մտնողին ծախում էր գյուղապետի մոտ: Լավ էր, որ գյուղապետով էին պրծնում, եթե նրա դիտողությունից հետո էլի նկատվեին, այս անգամ արդեն անտառտնտեսությանն ու միլիցիային պիտի պատասխան տային:

Արամը չէր քնել ողջ գիշեր: Գիշերաշրջիկի նման թափառել էր սենյակից սենյակ, բակից տուն, տնից բակ: Սիրտը խռովահույզ էր, տագնապներով լեցուն: Կինն արդեն քանի օր էր՝ գամված էր անկողնուն, գրպանում կոպեկ չկար, տանը պաղություն էր զգացվում, հիվանդ կինը դողդողալով վազում էր պետքարան, որդին սառած ձեռքերով էր դաս անում: Ուտելիքը՝ ոչինչ, էլի մի բան ճարվում էր, ա՛յ վառելիքի ու դեղի հարցն էր, որ մտատանջում էր նրան: Սովին մի կերպ կդիմանան, ցավին ու ցրտին ինչպե՞ս դիմանան: Այս տարի ընկերներն իրեն չկանչեցին, աշխատանք չկար, իրենք էլ են պարապ, գրանցման համար էլ անընդհատ նեղում են: Գոնե մի քանի ամիս գնար, երկու կոպեկ աշխատեր, էլի մի բան առաջ կընկներ: Կնոջ համար էլ մտածել էր՝ զոքանչին կկանչի, կնայի: Բայց չէ, գործ չեղավ այս տարի, իսկ կինն օրեցօր ավելի էր վատանում, քաղաք պիտի տաներ, արդեն իսկապես առանց բժշկի չէր լինի:

Արահետները, որտեղ արդեն չորացել էին թուփ ու ծաղիկ, մաշվել էին համագյուղացիների սայլերից. գյուղապետը մեկ-մեկ չնկատելու էր տալիս. ի՞նչ աներ, մարդիկ կարիքի մեջ էին: Քամին այնքան արագ էր պտտվում, որ մերթընդմերթ փորձում էր տանել գլխարկը: Մի ձեռքին՝ ճիպոտ, որով մեկ-մեկ ավանակին էր ճանապարհ ցույց տալիս, մյուսով փորձում էր գլխարկը գլխին պահել: Տագնապախառն մտքերից հուզախառով՝ չնկատեց էլ, երբ անտառ հասավ: Գոտկատեղից հանեց կացինն ու անցավ գործի: Առաջին ծառը, որ երկար ճյուղեր ուներ, շատ ժամանակ խլեց, արդեն հոգնել էր և ուզում էր դադար առնել, երբ կկվի ձայնի նման մի ձայն առավ ականջը: Լսողությունը լարեց: Քիչ անց ձայնը կրկնվեց՝ չէ՛, կկու չէր, աղջկա կչկչոցի էր նման, բայց ո՞վ էր, առավոտ կանուխ այս ամայի անտառում: Ձայնն ավելի մոտիկից լսվեց, հետո կարմրադեղին մի փեշ ընկավ աչքին՝ ծառի բնին փաթաթված: Հետո «Փեշը» քրքջաց ու թաքնվեց ծառերի հետևում: Արամը տեղից ցատկեց՝ ո՞վ է: «Փեշն» առաջ ընկավ, վազեց դեպի անտառի խորքը: Արամը ձայնեց՝ մի՛ գնա. արջ կա...Իսկ ձայնն ասես խաղում էր նրա հետ, մերթ կչկչում էր բարձր, մերթ երգեցիկ հեգում՝ Արա՜մ, Արա՜մ...

Ինքն էլ չհասկացավ՝ ինչպես խորացավ անտառի մեջ: Երբ բացատի հասավ, ձայնը լռել էր: Անտառային խոխոջուն մի առվակի մոտ կանգ առավ. ծարավ էր, նայեց շուրջը, ոչ ոք չկար, կռացավ, բռով ջուր վերցրեց, հետո ուղղեց մեջքը՝ հայացքը նորից շուրջը պտտեցնելով:

Առվակի ակունքն աղբյուր էր, բլրից իջնում էր՝ մի քիչ այն կողմ բոլորելով փոքրիկ լճակ: Արևի շողերը ծառերի արանքից ընկել էին նրա մեջ ու ցոլցլում էին կապտաոսկեգույնով: Մոտեցավ:

Լճակն այնքան սիրուն էր ու գողտրիկ՝ չկարողացավ անտարբեր անցնել: Հանկարծ ջրի վրա օղակներ նկատեց, հետո դրանք սահեցին հեռու, նորից հայտնվեցին, ջրի ճողփյուն լսվեց, ու նրա մակերևույթին հայտնվեց մի կին, լույսի պես թափանցիկ ու մերկ, արևից ալիքվող մազերի ոսկեգույն բոլորակը գլխի շուրջ պահած, և նույն ձայնը հասավ Արամի ականջին, հետո կինը սկսեց երգել բարակ, նուրբ: Արամին այս ամենը երազ թվաց, թվաց՝ ծանր խոհերից գլխի հետ ինչ-որ բան է պատահել: Գուցե տեսի՞լք է, կամ անտառի ոգի՞...»: Երբ ափին հասավ, կինն արդեն կանգնել էր նրա դեմ, մորեմերկ, առանց ամոթի, ուղիղ աչքերի մեջ նայելով.

-Ճանաչեցի՞ր,-չարաճճի խնդաց նա՝ աչքերը կկոցելով:

Աչքերի այդ ծանոթ շարժո՞ւմն էր, թե՞ մի այլ բան՝ նրա հիշողության մեջ անցյալի ակնթարթներ վառեցին ու նորից հանգան...

-Շուշանն եմ, ձեր դասարանի,-ասաց ու Արամի ձեռքը դեպի սիրտը տարավ:

Անակնկալից Արամը կտրուկ հրեց նրան, զարմանքով ինչ-որ բառեր շշնջաց, բայց կինը համառորեն նայում էր նրան, չէր ուզում զիջել: Հետո խելագար մի ճիչ արձակեց ու նորից ջուրը մտավ:

Այդ տարօրինակ, օտարոտի ձայնը շատ բան ասաց: Հիշեց: Հարևանությամբ էին ապրում: Դպրոցը դեռ չավարտած՝ հայրը զոռով ամուսնացրեց: Մի տարի էլ չանցած՝ սկեսուրն ու տալը նրան ետ բերեցին.

-Խելքը թռցրել է, ձեր հիվանդ աղջկան տվիք, դժբախտացրիք խեղճ տղայիս,-հոխորտաց մայրը,-հիվանդ էր, ձեր տանը պահեիք, ուրիշին ինչո՞ւ դարդի տեր դարձրիք...

Հետո նրան քաղաք տարան: Երկար ժամանակ բուժվում էր այնտեղ: Երբ տուն դարձավ, աչքերի կրակն արդեն մարել էր, ինքն էլ՝ ամեն ինչին անտարբեր: Արամը նրան վաղուց չէր տեսել:

Մտքերի գիրկն էր ընկել, երբ անակնկալ հասկացավ. ջրի վրա երկար ժամանակ էր՝ ո՛չ կինն էր հայտնվում, ո՛չ օղակներ: «Չխեղդվի»՝ անցավ նրա մտքով: Մի փոքր էլ, ու նա արդեն ջրում էր: Լողաց, մինչև լճի վրա նորից օղակներ նկատեց: Ասես չար կատակ՝ կինը հայտնվում էր ջրի վրա, կարապի նման թեթև լողում ու նորից անհետանում ջրի տակ: Մինչ Արամը կհասներ, նա արդեն ափին էր՝ չարաճճի ժպիտը դեմքին:

-Խելքդ թռցրե՞լ ես, թե՞ գլուխդ ծարավել,-շպրտեց բարկացած, երբ ափ էր հասել ու թաց հագուստներն էր քամում,-ուրիշ զբաղմունք չունե՞ս, ի՞նչ ես ընկել անտառները, բա դու վախ չունե՞ս:

Կինը մի պահ լրջացավ, հետո նրա խոշոր, շագանակագույն աչքերն էլ ավելի մթնեցին, նրանց չարաճճի փայլի փոխարեն արցունքի երկու խոշոր կաթիլներ լողացին, լողացին ու անզուսպ ընկան նրա հուզմունքից բարձրացող կրծքին: Արամն անսպասելի խղճաց նրան, նրա դողացող մատները բռնելով՝ շշնջաց.

-Ների՛ր, ների՛ր ինձ, չէի ուզում...

-Ինձ բոլորն են խենթ համարում, դու մեղավոր չես, մեղավորն իմ բախտն է: Գիտե՞ս, ես քեզ շատ էի սիրում, իսկ դու միշտ հեգնում էիր, չգիտեիր...

Հետո ինձ ամուսնացրին: Ես ողջ գիշեր չքնեցի: Նստել էի ծեր բակում և հուսով էի, որ կհայտնվես: Բայց մայրս ինձ գտավ, գտավ ու նախատելով տուն տարավ:

Այդ մարդը՝ իմ ամուսինը, բայց ի՞նչ ամուսին. նա վախենում էր ինձ հետ քնել, իսկ ես ծածկում էի նրա հարազատներից, խղճում էի նրան: Մի օր էլ իրենք որոշեցին, որ ես արժանի չեմ իրենց տղային, հավաքեցին իրերս ու մեր տուն բերեցին: Իսկ ես հիմարաբար լռում էի...

Արամը նայում էր նրան ու մտածում՝ ինչպե՞ս չի նկատել, ախր նա աստվածային գեղեցկություն ունի: Մուգ շագանակագույն խառնիխռիվ մազերը բոցկլտում էին արևի շողերից, կիսամերկ ուսերը փայլում էին սադափի նման, բարակ իրանին թեթև գոտի էր ագուցված՝ աշնանային գույների պատառիկներով: Աշունն ասես իր գույներից կաթել էր նրա մազերին, հագուստին ու մարմնին: Դեղին փոքրիկ ծաղիկներով փեշի վրա կարմրաոսկեգույնի հետքեր էին, ուսերն ու ձեռքերը ամռան արևներից թեթև շառագունած էին՝ բաց սաթի փայլով: Մինչդեռ հմայված նրան էր զննում, նա լռեց, հետո հանկարծ, ասես վտանգ զգացող եղնիկ, մի ոստյունով թռավ թփերի մեջ, չարաճճի ժպիտ աչքերում՝ մարտահրավերի նման: Օդի մեջ նորից տարածվեցին նրա բույրն ու ձայնի ալիքները՝ Արա՜մ, Արա՜մ...

Արամն իրենից անկախ, ասես բնազդաբար, մտավ խաղի մեջ՝ վազելով նրա հետևից: Աղջիկն անգիր գիտեր ծառ ու թուփ, այնպես էր ոստնում, մագլցում փոքրիկ բլուրներ: Արամը չէր կարողանում հասնել նրան: Իսկ հետո կորցրեց տեսադաշտից, թափահարեց ձեռքը՝ մտածելով, որ չարժե շարունակել: Քրտնել էր, և իջավ աղբյուրի մոտ՝ լվացվելու: Ի՜նչ տեսնի: Նորից կիսամերկ ծնկել էր աղբյուրին ու լվացվում էր անհագորեն: «Այս կինը ո՛չ վախ ունի, ո՛չ ցրտի զգացում: Տեսնե՞ս...»,- ու իր սեփական մտքից շանթահար՝ վազեց նրա մոտ:

Շուշանը մի պահ ընկրկեց, հետո նստել էր քարին անբռնազբոսիկ ժպիտն աչքերի ցոլանքներում:

-Մի՛ ամաչիր, արի,-շշնջաց նա: Հետո սկսեց փեշի քուղերն արձակել: Արամը քար կտրած ո՛չ մոտենում էր, ո՛չ հեռանում: Մի սուր զգացում շամփրեց ողնաշարը, հետո գլուխն այրվեց տենդից բռնվածի նման: Նա ինքն էլ վախեցավ իրեն համակած ցանկությունից՝ քանի շաբաթ էր կնոջ հիվանդության պատճառով...

Հետո չհասկացավ, ինչպես մի տաք մարմին փաթաթվեց իրեն: Օձագալար եկավ, կպավ ոտքերին, ձեռքերը երկարել էր գլխից վերև ու գրկել տղամարդու իրանը: Կնոջ մոլեգին, կրակոտ շարժումներն Արամին զգետնեցին: Նա ասես թռցրեց կնոջը, պոկեց գետնից ու պառկեցրեց աշնանային խոնավ խոտերին: Նրանց մեջ ասես նախամարդու էներգիա էր այրվում, ասես Ադամից ու Եվայից այս կողմ կնոջ ու տղամարդու առաջին հանդիպումն էր: Օրվա ոսկեցոլքը տերևների մեջ երկար լողաց, լողաց, հետո գնաց թաքնվեց թփուտների տակ՝ իր հետևից քարշ տալով թանձրացող մութի թանաքոտ վարագույրը: Անտառային ձայներն արդեն մարում էին, նրանց կիսանիրհի մեջ մարդկային խուլ հառաչանքներ էին ու հևոց...

Տունդարձի ճամփան բռնել էին աղոթարանում լույսի առաջին վետվետումներից:

Արամը քայլում էր գլխահակ, նորից մտքերով ծանրաբեռ: Փայտը, գիշերը մնալով անտառում, ավելի էր խոնավացել, առավոտվա շաղը դեռ վրան, սայլի մեջ խիտ-խիտ դարսված՝ օրորվում էր ավանակի անհամաչափ ու ծույլ քայլքից: Արամը հեռանում էր անտառից, բայց նրան թվում էր, թե այնտեղ թողել է մի թանկ բան, որ կարող էր տարիներ առաջ իրենը լինել: Արամից բավականաչափ հեռավորության վրա մի ստվեր էր հետևում նրան՝ երերուն ու վախկոտ: Ստվերը մերթ թաքնվում էր թփուտներում, մերթ անհամարձակ ճանապարհ ելնում: Արամի մտքերն այդ ստվերի հետ ամենևին էլ կապ չունեին, Արամի ցավը մի այլ, տարիներ առաջ չնկատած կնոջ շուրջ էր պտտվում: Իսկ ստվերն այն էր, ինչ մնացել էր այդ կնոջից՝ չբավարարված սիրո մնացորդներով ու հանկարծակիորեն բռնկված կրքով:

Երբ գյուղ մտավ, հեռվից նկատեց իրենց տան մոտ կանգնած տաքսին: Հետո վազելով եկավ ու նրան գրկեց երեխան՝ աչքերն արցունքով ողողված:

-Մամային տարել են, գիտե՞ս:

Արամը շտապեց բակ: Քույրը տնից դուրս եկավ կապոցներով ու մոտեցավ տաքսի մեքենային: Արամին նկատելով՝ հուզումնախառն ու արագ արտաբերեց.

-Սոնային արդեն վիրահատել են, լավ է, հիվանդանոց եմ գնում, դու էլ արի, քեզ կսպասենք, մինչև փոխվես:

Արամը տուն մտավ: Միջանցքից թանապուրի ախորժաբույրն առավ, ստամոքսը կծկվեց: Մտավ խոհանոց, շերեփն առավ ու մի պնակ թանապուր լցրեց՝ էլ չէր դիմանում: Մի շնչով դատարկեց պնակն ու սենյակ մտավ փոխվելու: Մի տեսակ թեթևություն էր զգում, որ կնոջ վիրահատությունը հաջող էր անցել: Իսկ բժշկին վճարելու մասին ընդհանրապես մոռացել էր:

Ճանապարհին քրոջ խոսքերը նրա մտքերի թելերը ետ բերեցին: Հեռավոր մի ազգականից շտապ փող էին ճարել, երկու ամսից վերադարձնելու պայմանով:

Նոր տարին անցել էր: Սոնան բավականին կազդուրվել էր, և գարունը դեռ չեկած՝ Արամն արդեն Ռուսաստան մեկնելու ծրագրեր էր մտմտում: Մի օր էլ զանգահարեց հորեղբոր տղան և ասաց, որ անմիջապես մեկնի՝ գործ կա: Երկու օրում ամեն ինչ կարգավորեց, գնաց զոքանչին էլ բերեց իրենց տուն՝ կնոջն ու երեխային նայելու:

Գիշերը, երբ բակ էր դուրս եկել, մի ստվեր տեսավ: Թվաց մեկը՝ երկար փեշով, կանգնել է ծառերի արանքում ու մոտ չի գալիս: Արամն անտառի ծանոթ գլխապտույտն ունեցավ, մտավ այգի, բայց ծառերի արանքից խշխշալով մի բան փախավ: «Մա՞րդ էր, թե՞ կատու»՝ Սանցավ մտքովը: Այդ գիշեր վիրահատությունից հետո առաջին անգամ կնոջ հետ պառկեց. չէր կարելի: Սոնան ամուսնու մեջ տարօրինակորեն արթնացած մի ուժ հայտնաբերեց: Ու մտածում էր՝ խեղճը կարոտել է:

Առավոտյան տաքսի մեքենան նրան օդանավակայան տարավ, իսկ նրանց բակում, խնձորենու տակ կանգնած, կիսամութի մեջ մի կին էր անխոս լալիս՝ ձեռքը կլորացող փորին:

Երբ գարուն եկավ, Արամի կինն արդեն լիովին կազդուրվել էր ու գարնան ծիծեռնակների պես վայելում էր ամուսնու ուղարկած փողերը, բայց հյուսիսից եկող:

Գարնան հետ ողջ գյուղը փսփսում էր Շուշանի կլորացող փորից, նրա անտառներում թափառելուց և այն տղամարդուց, որն օգտվել էր նրա վիճակից: Բայց ոչ ոք չգիտեր, որ այդ ասեկոսեները հասցեատիրոջն ամենևին էլ չէր հետաքրքրում: Նա երջանկության դողով ամեն օր զրուցում էր իր մեջ հասունացող փոքրիկի հետ՝ սարում լիներ, թե անտառում, կամ մահճակալի մեջ կծկված: Հայրն ու մայրը չէին համարձակվում նրան քաղաք տանել, զրկել երեխայից: Վախենում էին այդ երևույթը ավելի խորացնի նրա հիվանդությունը: Այդպես, հոգսերի ու գործերի մեջ թաղված գյուղը գրեթե մոռացել էր նրա մասին, երբ մի օր լուրը տնետուն ընկավ. «Ախչի՛, իմացե՞լ ես՝ Շուշանն այս գիշեր աղջիկ է ունեցել»:

Շուշանի աղջիկը փարթամ, մոր նման գեղեցիկ՝ մեծանում էր ամեն օր՝ հիացնելով բոլորին, իսկ Շուշանն ավելի կծկվել, մի բուռ էր դարձել: Նա արդեն գրեթե տուն էլ չէր մտնում, թափառում էր սար ու ձոր, երբ հարցնում էին, մի անուն էր մտմտում ու նորից գնում էր անվան տիրոջը փնտրելու: Աշունը դեռ չեկած՝ նրա վիճակն ավելի վատացավ, հիվանդությունը սրվել էր ծննդաբերությունից հետո: Արդեն փորձում էր վնասել մարդկանց: Ու մի օր էլ մի մեքենա կանգնեց նրանց դռան մոտ, երկու տղամարդ իջան, ձեռքերը կապկպեցին ու նրան տարան: Այդ օրից նա այլևս գյուղ չվերադարձավ:

Ձմռանը, երբ Արամը վերադարձավ, այս խոսք ու զրույցը դեռ պտտվում էին գյուղի մեջ: Իսկ ամանորին, երբ բացեց հարևանների դուռը՝ շշմեց: Փոքրիկ սայլակին նստած էր մի հրաշք մանուկ: Նրա շագանակագույն չարաճճի աչքերն ու ոսկեգույն մազերը մորն էին հիշեցնում, իսկ քիթ ու բերանն Արամը նմանեցրեց իր որդուն: Տատն ու պապը արդեն ծերացել էին, բայց լավ էին պահել իրենց թոռանը: Նրա այտերից վառ նռնագույնն էր կաթում: Արամը մոտեցավ, կանգնեց երեխայի մոտ, գրկեց, սիրեց, իսկ երբ հեռանում էր նրանց տնից, երեխան լացեց նրա հետևից:

Այդ օրվանից նա չէր մոռանում երեխային, առիթ էր փնտրում նրանց տուն կամ բակ գնալու: Իսկ երբ Շուշանի մայրը մահացավ, կնոջ ականջին մի բան փսփսաց, որ հետո ամբողջ գյուղն իմացավ: Կինը չէր կարող չհամաձայնել, ինքն այլևս ի վիճակի չէր երեխա ունենալ, իսկ Արամը շատ էր սիրում այդ աղջկան: Շուշանի հայրը հեշտությամբ համաձայնեց: «Ես տապալվող ծառ եմ, շատ կուզենայի նրան տեսնել հուսալի ձեռքերում»՝ սա էր նրա պատասխանը:

Տղան կանգնել էր բակում՝ մոր փեշը բռնած, կնոջ ձեռքերում մի մեծ ծաղկեփունջ էր, երբ Արամն աղջկան գրկած եկավ: Հետո եկան գյուղացիները՝ աչքալուսանքի: Բոլորը կարծում էին՝ պարզապես որդեգրել է: Սակայն, տարիներ հետո այդ կծիկն էլ քանդվեց, աղջիկն ասես հոր քթից թռած լիներ՝ մոր անզուգական պատկերով:

Մարինե
ՄԿՐՏՉՅԱՆ

Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործություններում Գյումրին դիտարկվում է որպես գոյաբանական տարածք, մշակութային կոլորիտի և ազգային հիշողության կենտրոն:

Երբ Հովհաննես Գրիգորյանն իր պոեզիայով հայրենիքը տեղավորեց սրտում ու բառերում, դժվար թե պատկերացներ, որ տարիներ անց իր գրչի զարկերն ու սրտի թրթիռները կդառնան նաև նոր սերնդի գրադարանների ու սրտերի պարտադիր ու ոգեշնչող մասնիկը:

Վերջերս Գյումրու Ֆուրմանով փողոցում՝ բանաստեղծի մանկության բակում, նրա հիշատակը հավերժացնող հուշատախտակ բացվեց:

Ներկաները՝ գրականության ու մշակույթի մարդիկ, մերձավոր հարազատները, վստահ էին՝ այս քայլը խորհրդանշական է բանաստեղծի պոեզիան էլ ավելի տարածելու, հանրահռչակելու համար: Ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ նման քայլերը ոչ միայն հիշատակի նշան են, այլև շարունակական կապ անցյալի ու ներկայի միջև: Հովհաննես Գրիգորյանի խոսքը շարունակում է ոգեշնչել և ձևավորել այն սերնդին, որ դեռ որոնում է իր բառի ու գոյի ճշմարտությունը այս բոլորովին, բոլորովին ուրիշ աշխարհում:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՆՔԻՑ

(Պոեմ՝ տարբեր տարիներին գրված բանաստեղծություններով)

ՀԻՆ ԳՈՐԳ

Եվ մատդ նորից նախշի վրայով
սահում է կամաց –
սկզբում աղոտ,
հետո պարզորոշ ինչ-որ ձայներ
են հասնում շատ հեռվից՝
վայրի աղմուկով գնում-գալիս էր
պատուհանիդ տակ
ավտոմեքենան,
նախ մեկն էր, հետո դարձան մի
քանի, հետո շատացան,
և փողոցային շների կյանքը
թևակոխեց նոր,
հիրավի ծանր, դժվարին էտապ,
որի նմանը չէր տեսել բնավ
անցյալ օրերի ոչ մի անտեր շուն:
Փողոցի շներ՝ մերկ ու անոթի,
իմ ժամացույցներ փոշոտ
մանկության,
ձեր աղեկտուր կլանչոցն ահա
հասավ ականջիս,
ասել է՝ ժամը յոթն է, և տանից
արդեն ելել է ժեշտանչի Վաղոն,
գործի է գնում, անտրամադիր
քացահարելով
ճամփին պատահած քնատ
շներին,
որոնք այնպես էին վարժվել
արդեն սապոգին նրա՝
էլ չէին շարժվում պառկած
տեղերից՝
պատերի տակից,
ուր մանր դողով սեղմված իրար
անցկացրել էին չարքաշ, անոթի
ևս մի գիշեր:
Հետո վայնասուն մի անտանելի՝
ժամը ութն եղավ,
վարսավիրները անցան
փողոցով,
և խիստ գործնական, վարժ
շարժումներով՝
փորձելով ձեր պոչ-ականջի վրա
սրությունն իրենց մկրատ-ածելու:
Եվ մատդ նորից նախշի վրայով
սահում է կամաց –
և շունչդ պահած սպասում ես
լուռ՝
կողքի սենյակից
ուր որ է մայրդ կկանչի հիմա –
վեր կաց,
այ տղա, ուշ է, ժամը տասն եղավ,
և ի հաստատումն մորդ խոսքերի՝
հայհոյանք, հաչոց խառնվեցին
իրար՝
մսագործ Ավոն,
բնույթով բարի, բայց տեսքը դաժան,
բոլորի կողմից չսիրված, նաև
շների կողմից,
և կրկնվում էր նույն պատմությունը ամեն առավոտ՝
ճիշտ ժամը տասին –
մսի հոտ առած շներն հաչում էին,
և հայհոյում էր Ավոն կատաղի,
շներից քիչ-քիչ անցում անելով
նախ կնոջն, ապա՝ զոքանչին,
հետո հարևաններին, հետո՝
ընդհանուր,
հետո մարում էին աղմուկ
ու քայլեր,
և մատդ նորից նախշի վրայով
սահում է կամաց,
ինչ-որ քաղաքի,
ինչ-որ մի բակում հին գորգ է
կախված,
և մի ջահել կին,
երեխան գրկին, բարի հայացքով
նայում էր, լռում,
գուցե հասկացավ, որ տարիները
գնում են արագ,
և տարիքն առած օտարականն
այս,
ի՞նչ իմանաս, թե ինչեր է հիշել
այս հին գորգի դեմ,
որ խոնավացան աչքերը,
նույնիսկ արցունք հայտնվեց՝
նախ մեկը,
հետո դարձան մի քանի,
հետո շատացան…

ԵՐԵԽԱՆ, ՈՐ ԱՐԹՆԱՀԵԼ ՈՒ ԼԱԼԻՍ ԷՐ

Մարմանդ անձրև էր մաղում
Բոշի թաղում, և օրը երեքշաբթի
էր:
Գորշ մութուլուսի միջով
գալիս ու տեղ չէր հասնում
Յոթվերքի ղողանջը հեռավոր,
գալիս էր ու խառնվում
արթնացած երեխայի լացին,
դարպասների ճռնչոցին ու հազին
տղամարդկանց,
որ ծանր քայլերով ելնում էին
տներից
ու հանդիսավոր,
դանդաղ մարում անձրևի մեջ
միալար:
Իսկ երեխան լալիս էր, ու անձրևը
չէր կտրվում:
Բոշի թաղում երեքշաբթի էր՝
անթիվ, անժամանակ, անհույս:
Մի պառավ պիտի մեռներ՝
ծոռներով, թոռներով շրջապատված,
և իր գործն իմացող տան շունը
վայում էր բարեխղճորեն,
վայում էր առանց հաճույքի՝
հալից ընկել էր արդեն…
Շաբաթից ավելի էր՝
պառավը մեռնում էր ու չէր մեռնում,
և շունը վայում էր ու անձրևը չէր
կտրվում:

իսկ երեխան լալիս էր,
ու պառավը չէր մեռնում –
իր մեծ որդուն էր սպասում,
որին հեռագիր էին տվել
հեռավոր մի քաղաք, մի քանի
օրվա ճանապարհով,
որտեղ հիմա ձյուն է գալիս
և գորշ մութուլուսի միջով
գնում-տեղ չի հասնում
Յոթվերքի ղողանջը մեռավոր,
լացը երեխայի,
դարպասների ճռնչոցն ու հազը
տղամարդկանց…
…Եվ օրերը, որ անձրևի նման
մաղում են միալար,
անվերջ շարանը
երեքշաբթիների,
և կյանքը, որ անցնում է գորշ
մութուլուսի միջով,
և ծերունին, որ անցնում է ծանր
հազալով,
ծերունին – երեխան, հիշո՞ւմ ես,
որ արթնացել ու լալիս էր
Բոշի թաղում,
երբ օրը երեքշաբթի էր
և մարմանդ անձրև էր մաղում…

ԻՍԿ ԵՐԲ ՁՅՈՒՆ ԵԿԱՎ

Իմաստուն խոսելու կարոտը քեզ
խոցեց անվերադարձ,
և դու քայլեցիր կռացած:
Գավառական փոքրիկ քաղաքը
քեզ ոչինչ չսովորեցրեց,
նա իր թարմ կաթն էր մատուցում
ճշտապահորեն՝
առավոտյան և երեկոյան:
Իսկ երբ ձյուն եկավ,
դու բոլորովին սենտիմենտալ
դարձար:
Դեռ մանկուց թեքում կար քո մեջ
անբացատրելի տխրությունների,
թախծի սահուն ելևէջների
և անկյունային գոյության հրաշքների նկատմամբ:
Իսկ երբ ձյուն եկավ,
դու ուզեցիր հիշել անցյալդ
գոնե մի ծխախոտի համար,
գոնե մի քիչ երազելու համար,
այդ ամենը դու ուզեցիր՝
հենց երբ ձյուն եկավ:
Գավառական փոքրիկ քաղաքը
ծաղկազարդ սոնետի է նման,
իզուր բաների համար այնտեղ
երկար չեն ծափահարում,
այլ ժպտում ենքթի տակ
և թատրոն են գնում հսկայական
ընտանիքներով:
Եվ գրավաճառը հին շլյապան
գլխին ուղիղ դրած
հրավիրում է քեզ խոսելու դեսից-դենից:
Իսկ դու լուռ սեղմում ես նրա ձեռքը,
կորած հիացմունքով
համեմատում իջնող ձյունը կաթի
հետ
և հրաշքով փրկվելով դրավաճառի կենսուրախությունից,
նետվում ես փողոց
և քայլում ծաղկազարդ սոնետի
տողերի երկայնքով:

ԾՐՋԱՆԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՀԱՄԱՐ

Փայտյա հասարակ շրջանակի
մեջ պարզ երևում է
հայացքդ մարած,
գլուխդ թեքած աջ ուսիդ վրա,
ցանցառ մորուքդ արդեն ճերմակող,
մագաղաթագույն դեմքդ անլվա:
Խելառ Սարգի՜սը,
Խելառ Սարգի՜սը – և ոտաբոբիկ
երեխաների բազմությունն ահա
ճիչ ու աղմուկով
վազեց փողոցով –
սակայն տխուր է հայացքդ
մարած,
ոչ ոք չգիտե՝ երրորդ գիշերն է,
որ դու չես քնում,
երրորդ գիշերն է
սատկել է կատուդ՝ ընկերդ միակ,
և գաղտագողի թաղել ես նրան
քաղաքային մեծ այգու
անկյունում,
երրորդ գիշերն է,
որ դու ջրում ես գերեզմանն
առատ,
փխրեցնում հողը,
մաքրում քարերից,
մոլախոտերից,
և կողքին նստած սպասում ես
լուռ,
թե արդյոք երբ է
դուրս գալու ծիլը քո կատվածառի…
Հուսով նայում էիր երկնքին խավար
և կրկնում էին շուրթերդ ակամա՝
եթե գարունը անձրևոտ լինի,
եթե ամառը լինի արևոտ,
եթե աշունը բարեսիրտ լինի,
եթե ձմռանը առատ ձյուն տեղա…

Խելառ Սարգի՜սը,
Խելառ Սարգի՜սը –
և ոտաբոբիկ
երեխաների բազմությունն ահա
սուրաց փողոցով…
և գիշերն իջավ՝ երկու ձեռքերով
հենվեց տաք հողին…
իսկ դու չես հոգնել,
թեև հայացքդ մարած է լրիվ,
նստել ես ինչ-որ դարպասի կողքի,
գլուխդ թեքած աջ ուսիդ վրա –
ու հանկարծ տեսար՝
ինչ-որ տեղ մութը ավելի էր մութ,
և այդ մութի մեջ երկու կանաչ
կետ,
լուսավոր կանաչ,
մերթ մոտենում էին ու մերթ հեռանում,
և քո մարմինը ծգվեց, վեր ելավ
և սրտապատառ վազում էիր արդեն
քաղաքային մեծ այգու ուղղությամբ
և հենց դռան մոտ քեզ դիմավորեց
Կապույտ Դանուբի ալիքն
առաջին,
և թաքնվելով մթնում խտացած
ստվերների մեջ,
առաջ գնացիր –
թփերի միջից երևում էին պարզ
վալսի ներդաշնակ տակտով
զբոսնող
քայլքը զույգերի՝ ի՜նչ հրաշալի
տեսարան էր դա,
այրեր պատվարժան –
և զինվորական նվագախմբի
գործիքների պես
պսպղում էին մաքուր սափրված
այտերը նրանց,
իսկ ճարմանդները, կոճակներն
հապա…
Եվ տիկնայք փարթամ, լիքը
կրծքերով,
ադամանդների, ոսկյա, արծաթյա
գոտիների ու մատանիների,
ժանյակ-շղթայի, ապարանջանի,
ականջօղերի
սահուն-շարժական ճոխ
ցուցահանդես՝
ի՜նչ հրաշալի տեսարան էր դա.
անցնում էին հպարտ տատերպապերի, աղջիկ-հարսների
և փեսաների իրար սեղմված
շարքերն համերաշխ,
բոլորը խմբով, բոլորն ուս-ուսի,
միայն դու մենակ,
ցանցառ մորուքով,
գլուխդ թեքած աջ ուսիդ վրա,
մարած հայացքով
թփերի միջից նայում էիր նրանց,
և ձեռքդ ակամա
թաց գերեզմանն էր շոյում
քո միակ,
մեռած ընկերոջ,
և կրկնում էին շուրթերդ ակամա.
եթե գարունը անձրևոտ լինի,
եթե ամառը լինի արևոտ,
եթե աշունը բարեսիրտ լինի,
եթե ձմռանը առատ ձյուն տեղա…

ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Առաջին սերը, որը թաքնվում է
ստվերների մեջ,
քաղաքում,
ուր ոչ ոք քեզ չի հիշում,
ուր ոչ ոք չի նայում քեզ,
բայց ասում են առանց նայելու –
տխուր է,
և ավելի է տխուր,
երբ շրջում ես հայացքդ
և զըրընգ – զընգ
ղողանջում են քաղաքի
բոլոր եկեղեցիները,
և պատերի տակ մորթվող ճերմակ
աղավնիների հայացքում
արնաքամ է լինում առաջին սերդ,
որը թաքնվում է ստվերների մեջ,
փափուկ փետուրները քսելով
սև ու հարթ պատերի
կույր ու սգավոր աչքերին…
Իսկ նրանք չեն նայում քեզ,
բայց ասում են առանց նայելու –
իզուր է,
բայց ավելի է իզուր,
երբ շրջում ես հայացքդ
և գլխիվայր նետվում տարիների
ջրհորի մեջ,
և լացն ու հեկեկոցը
ծանր հոգոցի պես պոկվում են
մարմնիցդ,
և կնճիռներն են պոկվում
մարմնիցդ,
և մանկությունդ լցվում է
աչքերիցդ ներս
և սեղմում է սիրտդ…
սեղմում է սիրտդ…
Եվ խեղդվողի պես զարմանքից
ու հիացմունքից
բացում ես բերանդ ճչալու
համար,
որովհետև տեսնում ես նրան…
նրան…
խորքում, ամենահեռվում,
ամենավերջում,
ստվերների մեջ՝ ճերմակ
աղավնին – սերը առաջին,
որը մեկիկ-մեկիկ պոկում է
իր փափուկ փետուրները,
մեկիկ-մեկիկ բացում է իր
արնածոր վերքերը,
և խեղդվողի պես
ցավից ու կսկիծից բացում ես
բերանդ ճչալու համար
և… զըրընգ-զընգ
ղողանջում են
քաղաքի բոլոր եկեղեցիները…

ԱՂՈԹՔ

Չորս քայլ վեր…
սահման է:
Չորս քայլ վար…
սահման:
Աստված իմ,
այսքան էլ փոքրիկ հայրենիք,
այսքան էլ փոքրիկ
Հայաստան,
նորածնի բարուր է իսկական…
Նորածնի բարուրը գրկել եմ,
Աստվա՛ծ իմ, մոլորվել,
կանգնել եմ.
ասա ինձ, ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ-
Չորս քայլ վեր՝
ավեր է ու մահ է,
Չորս քայլ վար՝
ավար ու թալան…

Հովհաննես
ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՍԻԻԶԱՆ ԽԱՐՏԱԼԵԱՆ

ՅՈԳՆԵՐ ԵՄ ՁԵՒԱՑՆԵԼԷ

յոգներ եմ ձեւացնելէ, որ
ընթրիքի պատուոյ հիւրը ես եմ
երբ գիտեմ որ ամէն անգամ
ընթրիքը ես եմ
ամէն անգամ
ընթրիքը ես եմ

հեռախօսիս վրայէն ջնջեցի
բոլոր անմիտ խաղերը
ընկերային ցանցերը
բռնաբարութեան խուցին մօտէն
բարձրացող
աղբի գարշահոտը

սկիզբը ձեռքս ակամայ կերթար
գարշահոտին
թմրամոլի պահանջքը հոն է
ուրուական ցաւի նման
չկայ թեւդ բայց
կայ թեւիդ վառ յիշողութիւնը

կուրծքէն կտրուիլը
անսպասելի արագ էր
ու ես մոռցայ կաթի համը
հիւթալի
հիմա կը մտածեմ
երթալ քայլ մը անդին
ձեռքիս անցնել հի՞ն
ժամացոյցը
աստիճան մը եւս կտրուիլ
ընթրիքներէն սեռերէն
դառնալ բարեյոյս մարդ



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷ-ՐԵԱՆ

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՍԻՐԵՐԳ

Այդքան կանուխ լերկացած
անտառներու թէ փողոցի
թխկենիի ծառերուն մէջ,
աշնանային տերեւաթափի
համատարած ցանցին ինկած,
կարգ մը ծառեր, տակաւին
շքեղօրէն կը պահեն
իրենց ոսկին
եւ կարմիրը բոցեղէն՝

ինչպէս որ դուն, սիրելիս,
ինչպէս որ դուն, սիրելիս:

ԱՐԱՀԵՏԷՆ ԱՂՏՈՐԻ

Ամառ կը յուշէ,
թարխուն ու ծոթրին,
հազար բնական այլ ջերմ բոյրեր,
այս ձմեռնային
եղանակին մէջ՝
իր վառ շողերով մեզ
գինովցուցած
օրը արեւոտ:

Կարծես կրկին կը քալենք
արահետէն աղտորի.
եւ սումմախի
կարմրաւուն ծաղիկները,
որոնք գիտեն իրենց ծոցին
այնքան բուրմունք,
այնքան համեր ամբարել՝
կ'արթնցնեն
զգացումներ անթեղուած:

Սէրս, աչքերդ
կը կայծկլտան վերստին,
եւ գլուխդ
հանդարտ կը հանգչի,
իմ կուրծքիս վրայ:

ՔԱՐԷՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՍԻՐԵԼԻ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ

Մայիս ամիսն ամբողջութեամբ
Նուիրուած է Տիրամօր
ոգեկոչման
Խորհրդանիշն է մօր
քաղցրութեան:
Մեր սիրելի Աստուածամայր,
Ամենահզօր անարատ տիրամայր
Դուն ես ամենայն առաքինի
Երանելի ու պատկառելի
Գերահրաշ ու ամենաշնորհալի
Իգական սեռն այս աշխարհի:
Աստուծոյ ընտրեալ համեստ
կոյսը
Շնորհունակ՝ Քրիստոսի մայր
կոչումը,
Խաղաղ, հանդարտ ու սիրուն
Երկնային մեր մայրն ես
զուարթուն:
Գարնան ցայտուն աղբիւրը
Եդեմական անթառամ ծաղիկը
Յաւերժ կը զարդարես
տիեզերքը:
Անդորր կապոյտ երկինք ու ջինջ
ջրեր
Աստուածածնի փիրուզեայ աչեր,
Աստուածավախ նայուածքդ
դողդոջուն
Վսեմաշուք կեցուածքդ
քաջազուն,
Գեհենային որոգայթներն
սանձարձակ
Մայրական
քո պաշտպանութիւնն ընդարձակ
Գիշեր ցերեկ կ'աղօթենք
Շնորհիքիդ ապաւինելով քեզ
կը հայցենք
Ու հաշտութեան միջնորդ
կը սեպենք,
Մեր եւ Աստուծոյ միջեւ
Յիսուսի անունի ներքեւ
Մեր մեղքերու թողութիւնն կը
խնդրենք
Խաղաղ ու սիրով կեանք
կը մաղթենք:
Բարեխօսէ մեզ համար Աստուծոյ
քով
Կ'աղերսենք քեզ անսահման
վստահելով:

ՄԱՐԻԱՆԱ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ

ՉԱՅՆ ՏՈՒՐ, ԾԱՌ

ԿՐԿԻՆ ԹՈՒՐՔԵՐԸ Կ'ԱՆՑՆԻՆ

Հարաւէն Հիւսիս, կ'ուղղուիմ
գլխիկոր…
Սուրիական ծովեզերքն է.
Կը խօսիմ տրտմած լեռներուն,
պատասխան չունին
Կը խօսիմ հարբած ծովուն՝
պատասխան չունի…
Կը ձայնեմ գետերուն. կարմիրը
կը ճչայ
Ձայն կու տամ երկնքի բաց
կապոյտին
Կը լսուի մեղմիկ մեղեդի.
- Եթէ նոյնիսկ հրեշտակներու
լեզուով խօսիս
Եւ սէր չունենաս, ոչինչ ես,- կ'ըսէ.
Ու ճամբայ կ'ելլեմ ես
սէր ունենալու.
- Նոր երկինք է - ցոյց կու տայ
հրեշտակս մատով,
 եւ նոր լուսին.
- Բացուիր երկինք նորոգէ, բժշկէ՛,
սիրովդ առատ:
Կորսուած հրեշտակներու երկիրը
պատասխան չունէր ինծի
Ոչ իսկ մեղեդիի խազ մը
Իսկ իմ հրեշտակս օրհնութիւն
մրմնջելով
Ձիս կը տանի թեւերուն վրայ
Ցոյց տալով սիրատոչոր տա-
ռածքներ
Ու ես շնորհապարտ եմ
Թափանցիկ այգին համար
Ուր միասին կը ճախրենք
Կ'անձրեւենք Սուրիոյ ափերուն
Որոգելով տանջուած երկիրը նոր
սիրով…
Մայրիներու երկրէն
Սահմանամերձ որոգայթներ
Մինչեւ Բերիա հնամենի
Ականուած փակուղիներ…
Արեւմուտքէն արեւելք ու հիւսիս
Կը շրջիմ Թեւերուն վրայ անոր
Մեծացուցանելով անունը
Սիրոյ…
Ականներու փոխարէն
Գեղեցկութեան ուրախութեան
իւղ հայցելով…
Մեսմերկ տերեւաթափ ձիթենիի
ծառեր
Մէկ առ մէկ կը տողանցեն մեր
առջեւէն
Աւերակ շէներուն ընդմէջէն
Որոնց արուները ինքնակոչ
նուիրեալներն են
Նոր գարնան մը խաբուսիկ:
Սուրիոյ ցաւակէզ երակներէն
անցնելով
Արեւմտահայաստանի բաց
վէրքին հոտը կու գար
Կրկին թուրքերը կ'անցնէին
այդ վայրերով…
Մի՛ յապաղիր, հրեշտակս, դուն
օրհնել
Եւ յոյսի լապտերդ վառել:

ՎԻԳԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԿԱՏԱՐԵԱԼԸ ԵՒ ԴՈՒՆ

Կուզեմ որ դուն հասկնաս,
թէ կատարեալին ես արժանի,
իսկ կատարեալը սրտերու մէջ
կը ծնի,
մտքերու մէջ է կը ծաղկի,
երազանքին կիշխէ ու անոր
կը տիրանայ:

Կուզեմ որ դուն հասկնաս,
թէ դէպի կատարեալը
ուղեւորութեանդ մէջ
կարեւոր չէ թէ ո՞վ ես դուն այսօր,
կարեւորն այն է թէ ով
պիտի ըլլաս վաղը
եւ յաջորդ օր,
մինչ ամէն կողմ խիղճեր
կը մեռնին,
ամէն օր, ամէն ժամ մարդիկ
կանմարդանան:

Կուզեմ որ դուն հասկնաս,
թէ ինչպէս որ աչուկներդ
կը փակես այս գիշեր,
այդպէս ալ պէտք է փակես
դռները մատղաշ սրտիդ,
խաւարին առջեւ եւ ատելութեան,
պէտք է սորվիս ատել՝
նոյնինքն ատելութիւնը,
վերադառնալ զայն խեղդելու
անգամներ եւ անգամներ,
իսկ ատելու կարողութիւնդ՝
առաւել անգամներ,
մինչ մարդիկ
որոնք անցեալին մէջ օր մը
սիրած եմ,
որոնք հիմա թոյն կը շնչեն,
որոնք ատելութիւն կը թքնեն,
դագաղի իրենց ճամբուն վրայ
քայլ առ քայլ կը խեղճանան,
աւելի կատեն, աւելի
կանմարդանան,
եւ կամաց-կամաց կը փոշիանան:

Կուզեմ որ դուն լաւ հասկնաս
այն, ինչ որ ես շատ ուշ հասկցայ,
թէ քաջն ու խիզախը
փամփուշտէ կամ անէծքէ չէ որ
կը խոցուին,
այլ հոգիի խաւարէն կը մեռնին,
խաւարէն, ուր ոչինչ կայ ազնիւ
կամ ասպետական,
հոն ուր կանհետանան
հերոսութիւններն անգամ,
հոն ուր կոյր է ամէն բան,
իսկ դուն երբ վաղը առաւօտ
արթննաս,
ու կապոյտ աչքերդ լայն բանաս,
պայծառն է որ պէտք է
ըմբոշխնես,
որպէսզի ընդունիս բարին
եւ բարին միայն,
պէտք է նոյնացնես մէջդ բարին
եւ ազնուականը,
ազնուականն ու մարդկայինը,
մարդկայինն ու խիզախը,
պէտք է խիզախ ազնուութեամբ
ծաղկիս,
պէտք է շունչ տաս մէջիդ
ծաղկումին,
ու հոն ծուարած բարիին
հասնելու համար կատարեալին:

Կուզեմ,
շատ կուզեմ
որ դուն այս հասկնաս:

ԼԵՌՆԱ ԳԱՐԱԳԻՒԹԻՒՔ

ԱՆՈՒՐՋ ՄԸ

Անվերջանալի ցաւերու
տուայտանքին
շիջած երակներուն մէջ
լոյս մը կը հոսի
կրնաս լսել անձկութիւնն
որ սարերուն վրայ խրոխտ
ժամանակի ընդմէջէն կը բորբոքի
բառեր կը դիզուին քովէ քով
ըղձանքներ կան անհասանելի
սակայն դուրս չեն թափիր
ներքինը կ'այրի
ով պիտի գիտնայ
ուր է թաքուն սէրը
որ միայն պիտի այրէին շրթները
անխօսելի
ձայնապնակը պիտի երգէ
ծիծաղկոտ քրքիջներով
սին երազներ պիտի չկրկնուին
հեղ մը
անցեալը սրբել կարելի
կը դառնայ
հեռանալ ոչ միայն մտքով
սիրտ մը անհետադարձ
ակնարկներու
իր խորշերը կը փակէ
առանձնութիւնը կը ժայթքի
հրաբուխի մը բերնին մէջ
կ'այրէ բոլորտիքը
եւ կ'ոչնչանայ մարմինը

էջը կազմեց
Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ